

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

18211

Weyss 28

9(47.925)

U-23

Weyss 1926



18211

# ՄԱՅԻՍԻ 28



Մանուկյուքանի՝

Ա. Ահարոնյանի, Ա. Բազանյանի, Ա. Խաչատրյանի,  
Ռոզբերի, Մ. Վարանյանի, Ա. Վարդանյանի ևն.

ՏՊԱԳՐ. Կ. Ց. ԿՆԵՐՍԻՍ

Փ Ա Ր Ի Զ

1926

9(47.925)


Մ-23

31 AUG 2007

SEP 2011

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Կ. Ց. Դ. ՓԱՐԻԶԻ ՇՐՋ. ԿՈՄԻՏԵԻ

# Մ Ա Յ Ի Ս Ի 28



Մանակցութեամբ՝

Ա. Ա. Կարոնեանի, Ս. Իսահակեանի, Ա. Խաթիսեանի,  
Թ. Ռուբինի, Մ. Վարանդեանի, Ս. Վրացեանի եւն.



ՏՊԱԳՐ. Կ. Ց. ՆԵՐՍԷՍ

Փ Ա Ր Ի Ջ

1926

18211

### Բովանդակություն

○○○○○

I. Հայաստանի.	Ա. Իսահակյան	էջ 3
II. Ռուսաստանի Ազգային Հանագումարը.	Ս. Մասունյան	4
III. Սարգսյան-Ղարաբաղյան.	*	22
IV. Հայոց Ազգային Խորհուրդը.	Ռուբեն	25
V. Մայիսի 28-ը.	Ս. Սահակյան	29
VI. Բարձրի դաշնագիրը.	Ս. Խաչատրյան	53
VII. Ազատ Հայաստանը եւ Եւրոպան.	Մ. Վարանդյան	45
VIII. Հայաստանի Հանրապետությունը.	Ս. Վրացյան	46

### Նկարներ

1. Հայաստանի բանակի և իշխանության առաջին ղեկավարները:
2. Առաջ Հայաստանի առաջին ներքին գործոց նախարարը:
3. Վահան Խորենի, Հայաստանի Խորհրդարանի անդամ (սպանված բոլշևիկների ձեռքով Չանգեղուրում):
4. Ժողովրդական քաղաք Երևանում (Միացեալ Հայաստանի անկախութեան յայտարարութեան առթիւ, 1919թ. Մայիսի 28ին):
5. Յ. Բաղդասարյան, Հայաստանի առաջին վարչապետը:
6. Ա. Խաչատրյան, Հայաստանի երկրորդ վարչապետը:
7. Հ. Օհանջանեան, Հայաստանի երրորդ վարչապետը:
8. Ա. Ահարոնեան, Հայաստանի Պատ. նախագահը:
9. Յ. Արդարեան, Հայաստանի Քեհրանի դեսպանը:
10. Գ. Փաստուսեան, Հայաստանի Վաշինգթոնի ներկայացուցիչը:
11. Ա. Սահակեան, Հայաստանի առաջին Խորհրդարանի նախագահը:
12. Մ. Վարանդեան, Հայաստանի Հոռվի ներկայացուցիչը:
13. Հայաստանի Հանրապետության պետական նշանը:
14. Ա. Էնկիսեան, Հայաստանի երկրորդ ելևմտական նախարար:



1821-2002

### Հայաստանին

**Պ**ՈՒՔ, երկնակերճ իմ հայրենիք, դու հինաւուրց ի՛մ Հայաստան,  
 Ահնահ բաւի սպասարկու, խորհուրդ խորին, ի՛մ Հայաստան,  
 Դո՛ւ պէտք սեպիկների ստեղծագոծ ի՛մ Հայաստան,  
 Եւ նոր խօսքի աւետարտ, հազարավեց ի՛մ Հայաստան:

Սաղաւարտներ դրած կանգնած քո շենքերդ կուռ երկաթի,  
 Արտերդ արիւնագունգ՝ արդարաբիսն ցորեն արթի.  
 Երկիկների ծուխերն անուշ՝ նուխրական Նաւասարդի,  
 Հին օրերի երգ արագուն, սեղան գոհի, ի՛մ Հայաստան:

Քո գեներդ՝ սեգ սուրացոյ, սգաստեց, կանուրջ քանդոյ,  
 Քաղաքների մոխիրներից ծած վարդերն արիւն-քուրոյ.  
 Ծարականներդ՝ հոգեքուղիս, շինականից երգը՝ քացոյ.  
 Հին սերերի, նոր կարօսի ուկի բաւքիս, ի՛մ Հայաստան:

Դուրիկներդ քո փափկասուն՝ սնուպսի գայլերին կեր.  
 Որքուկներդ՝ մերկ ու ծարաւ, սոխաղուկ, մսիկ ընկեր.  
 Բախից վրա՝ ծափ ու ծիծաղ, պիտիսնի ունան խօսքեր,  
 Նոր յոյսերի, նոր երգերի երազարոյր ի՛մ Հայաստան:

Բարեկաններից վաճառուած, սնիրաւուած ի՛մ հայրենիք,  
 Ուրիկներից կրունկի սակ աւերակուած ո՛րք հայրենիք,  
 Սարսափներով, եղեւներով յաւերժացած հի՛ն հայրենիք,  
 Արիւնից մեք՝ սուրք իրաւունք, հոգից արեւ, ի՛մ Հայաստան:

Կունկներդ հաւքաւ սանոյ պակտիսներից աշխարհաւած,  
 Նահասակուած սաճարներից գեթեքներդ երկնապս,  
 Մագաղաքների արիւնակերկ՝ ձայն հեծոքեան, հառաչանաց,  
 Հընուց ուխի վրկայարան, աւսերասուն, ի՛մ Հայաստան:

Օրանաւոր քո-Մասիքդ՝ սպարապետ քեզ պահապան,  
 Օրունկներից անխաւարից անքաների սուրք օրհնաքան,  
 Նոյ Նահապետ սասունասեւ՝ սոճուներից վեհ սյգեպան,  
 Մանուկներից ու կոյսերից արեան հընձան, ի՛մ Հայաստան:

Արդարախօս ու մեծասանց քո հին շեղով օրհներգըւած,  
 Լուսաւորչի յոյս կանքեղով երկիկներից շուտերակուած,  
 Անձանեղի ու դարերի սակցանկերով հոգիացած,  
 Հըրաշափառ քո Զարուքեանք՝ նորանսունկ ի՛մ Հայաստան:

Ս. Ի. ԻՍԱԿՅԱՆ

# ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Հայաստանի անկախութիւնը արդիւնք է ռուսական յեղափոխութեան: Յեղափոխութեան առաջին շրջանում Ռուսաստանում ապրող և ոչ մի ժողովուրդ չէր խօսում ազգային անջատման մասին. ամենքը տոգորւած էին համապետական գաղափարներով և իրենց ազգային հարցերը ձգտում էին լուծել պետական շրջանակների մէջ: Այսպէս, օրինակի համար, Վրաց ազգային բաղձանքների արտայայտութիւնը հանդիսացող Սօցիալ-Դեմօկրատ կազմակերպութիւնը կատարել պայքար էր մղում ազգային-կենտրոնախոյս գոյն կրող բոլոր գաղափարների ու քայլերի դէմ: «Ազգային շարժումը, տառւմ էր 1917 թ. յունիսին, բանտրների և գիւղացիների շրջանային ժողովում, վրացի սօց.-դեմօկրատների պարազուխ Նոյ Ժօրդանիան, հետեւանք է մի ազգի բուրժուազիայի և ազնակահուծեան քաղաքական իշխանութեան տիրանալու ձգտումի. պրօլետարիատն ու գիւղացիութիւնը հետապնդում են զուտ կուլտուրական նպատակներ: Այս հիման վրա բուրժուական ու ազնական կուսակցութիւնները պահանջում են ազգային հարցի լուծումը պետական ինքնօրինութեան սահմաններում, իսկ պրօլետարիատը պահանջում է ազգային ինքնավարութիւն: Ազգային ինքնավարութիւնը հնարաւոր է որոշ բնաշխարհի մէջ, եթէ որևէ ազգ այնտեղ մեծամասնութիւն է կազմում: Անդրկովկասում երեք խոշոր ժողովուրդ կայ — Վրացիներ, Հայեր և Թիւրքեր: Այն բնաշխարհների համար, ուր որևէ ազգ մեծամասնութիւն ունի, կազմում է ազգային-բնաշխարհիկ ինքնավարութիւն. ազգային տեսակէտով խառն շրջանների միջ մտցում է խառն ինքնավարութիւն՝ իւրաքանչիւր ազգի վերապահելով ինքնավարութիւն կուլտուրայի խընդրում... Ռուսաստանի համար հնարաւոր է մի ճանապարհ — կենտրոնական ռուսական հանրապետութիւն և ազգա-շրջանային ինքնավարութիւններ»: Եւ Ժօրդանիան թուում է այն հարցերը, որոնք ենթակայ պիտի լինեն «ազգա-շրջանային ինքնավարութիւններին». — դպրոց, ժողովրդական առողջապահութիւն և անասնաբուծութիւն, անդակական բնօթ ունեցող հաղորդակցութեան միջոցներ, հողերի շահագործում, դատարան, քաղաքային ձեռնարկներ, տեղական հարկեր, կենտրոնում հրատարակւած օրէնքների գործադրութիւն և այլն: (Այս համեստ ծրագիրը արդելք չեղաւ, սակայն, որ յետագային Ժօրդանիան դառնայ Վրաստանի անկախութեան գլխաւոր ախոյեանը):

Նոյն մտայնութիւնը տեսնում ենք և Կովկասի մահմեդականների մէջ, թէև այստեղ ազգային ինքնորոշման գաղափարը աւելի ջերմ համակրանքի է արժանանում: 1917 թ. ապրիլի 15-ին, Բագում, Ալի Մարդան բէգ Թովչիբաշեվի նախագահութեամբ, բացում է Կովկասի մահմեդական ներկայացուցիչների առաջին համագումարը. Ռասուլ Զադէի քաղաքական ղեկուցումից յետոյ, համարեա միաձայնութեամբ, որոշում է, որ «1) Ռուսաստանի ապագայ պետական-քաղաքական կազմը պէտք է լինի ռամկավար հանրապետութիւն տէրիտօրիալ-դաշնակցական սկզբունքներով, որով հնարաւոր է միայն լայնօրէն ապահովել մահմեդական ժողովուրդների ազգային շահերը: 2) Ընդունելով, որ իսլամական կրօն դաւանող բոլոր ժողովուրդները իրար հետ կապւած են հոգեւոր-կուլտուրական կեանքով, մահմեդականների համագումարը անհրաժեշտ է համարում ամբողջ Ռուսաստանում առաջ բերել ընդհանուր մահմեդականութեան մի կենտրոնական օրդան օրէնսդրական ֆունկցիաներով, պաշտպանելու համար վերը առաջադրած նպատակները»:

Նայն միաքն է արտայայտում և մահմեդականների համառուսական համագումարը, մայիս ամսին, Մօսկւայում: Սա արդէն Ժօրդանիայի «ազգա-շրջանային ինքնավարութիւնը» չէ, բայց և այնպէս Ռուսաստանից անջատելու գաղափարից շատ հեռու է: Ընդհակառակը, որոշում է կայացում «ամէն կերպ՝ աջակցել և պաշտպանել ժամանակաւոր կառավարութիւնը իր նոր կարգերով»:

Հայ ժողովրդի տրամադրութիւններն ու բաղձանքները ամենակատարեալ կերպով արտայայտեց Ռուսահայոց Ազգային Համագումարը, որից ընտրւած Գործադիր Մարմինը, յետագային, իրերի բերումով դարձաւ ազգիւրը Հայաստանի Հանրապետութեան գերագոյն իշխանութեան: Ոչ այնքան համագումարին, որքան նրա կազմած Ազգային Խորհրդին վիճակւեց, հայ ժողովրդի կեանքի ամենափոթորկալի շրջանում, կատարել բացառիկ կերպով պատասխանատու դեր: Նա դարձաւ այն հնօքը, ուր հաւաքւեց ու կուխւեց հայ ժողովրդի կամքը՝ գոյութեան պայքարի և ազատագրական մաքառումների օրհասական օրերին: Նա եղաւ նախակարապետը Հայաստանի պետականութեան: Առանց Հայոց Ազգային Խորհրդի ծաղումն ու գործունէութիւնը գիտենալու դժար է ըմբռնել այն յուզումնալից վայրկեանները, որոնք ծնունդ տւին Հայաստանի պետութեան: Այդ պատճառով ներկայ յօդւածը մենք կը նւիրենք Ռուսահայոց Ազգային Համագումարին՝ ցաւելով, սակայն, որ մեր ձեռքի տակ գտնւած նիւթերը բաւական չեն նրա ըստ ամենայնի ամբողջական պատկերը ներկայացնելու համար:

Ռուսական յեղափոխութեան Հէնց առաջին օրերից առաջ եկաւ և Ռուսահայոց համազգային ժողով գումարելու գաղափարը, որ էլ աւելի ուժեղացաւ, երբ Ռուսաստանի զանազան կողմերում սկսեցին տեղի ունենալ ազգային համագումարներ և երբ յեղափոխութեան ընթացքն ու ճակատի դէպքերը պահանջ դրին հայ ժողովրդի ներքին ուժերի համախմբման: Քաղաքական կուսակցութիւնները փոխադարձ համաձայնութեամբ, ընդունեց կէս-ընտրական, կէս-նշանակովի սկզբունքը: որոշ քանակութեամբ ներկայացուցիչներ պիտի ուղարկէին մի շարք քաղաքներ, հասարակական կազմակերպութիւններ և քաղաքական կուսակցութիւններ:

Սեպտ. 28-ին, Թիֆլիսի առաջնորդարանում, տեղի ունեցաւ Համագումարի անդամների և Միջկուսակցական Մարմնի խորհրդակցական նիստը, ուր պարզեց Համագումարի վերջնական կազմը. — 113 Գաշնակցականներ, 43 Ժողովրդականներ, 23 Սօցիալիստ-Յեղափոխականներ, 9 Սօցիալ-Դեմոկրատներ (մէնչևիկ, բօլշևիկ և հնչ.) և 7 անկուսակցականներ, ընդամէնը 203 ներկայացուցիչ: Համագումարին մասնակցեց առանձին ներկայացուցչութիւն և Արեւմտահայ Խորհրդի կողմից: Նոյն նիստում որոշեցին և Համագումարի բացման ու ղեկավարութեան տեխնիկական խնդիրները—ընտրել պատուոյ նախագահներ, չարտասանել ողջոյնի ճառեր: Երկար վէճից յետոյ Համագումարի բացման պարտականութիւնը թողնեց Միջկուսակցական Մարմինն: Բուռն վէճեր տեղի ունեցան և նախագահութեան կազմի մասին. ի վերջոյ որոշեց համեմատական սկզբունքով ընտրել 7 նախագահ և 5 քարտուղար: Թէև ըստ պատգամաւորների՝ քանակի նախագահների կէսից աւելին պիտի լինէր Դաշնակցական, բայց Դաշնակցականները համաձայնեցին ունենալ 3 տեղ և մի տեղ տալ անձնապէս Մօսկուայի ներկայացուցիչ անկուսակցական Ստ. Մամիկոնեանին:

Համագումարի հանդիսաւոր բացումը տեղի ունեցաւ Սեպտ. 29-ին ժամը 12-ին, Արտիստական թատրոնի ընդարձակ սրահում, խուռն բազմութեան ներկայութեամբ: Հ. Օհանջանեանի յանուն Միջկուսակցական Կոմիտէի արտասանած բացման ճառից յետոյ, ընտրեց 7 հոգինոց նախագահութիւն — Յ. Քաջազնունի, Ա. Խատիսեան և Ա. Ահարոնեան (Դաշն.), բժ. Ալվազեան (Ժող.), Լ. Աթաբէգեան (Ս.-Յ.), Գ. Տէր-Դաթիւն — Յ. Տէր-Յակոբեան ու Ա. Զոհրաբեան (Դաշն.), Ս. Մալխասեան (Ժող.), Յ. Ստեփանեան (Ս.-Յ.) և Ս. Յովսէփեան (Հնչ.):

Նիստի նախագահութիւնն ստանձնելով Ս. Մամիկոնեանը՝ նկարագրեց հայ ժողովրդի համար ստեղծած տարապայմանօրէն ծանր դրութիւնը և ջերմազին կոչ ուղղեց Համագումարին՝ հրաւիրելով համերաշխ ու ներ-

դաշնակ գործունէութեան: Որից յետոյ լուծեցին ժողովարութեան գործնական հարցերը, կազմեց պատգամաւորների լիազօրութիւնները քննող յանձնախումբ և որոշեց Համագումարը բաժանել 4 հատաձևերի, որից իւրաքանչիւրի մէջ մտնեն 5 դշնկց., 5 ժող. 3 սօց.-յեղ., 2 սօց.-դէմ.: Դաշնակցականները իրենց մէկ ձայնը բոլոր հատաձևերում զիջեցին սօց.-դէմ-երին ու հնչակեաններին:

Համագումարի 2-րդ նիստը, սեպտ. 30-ին, նւիրում է ընդհանուր քաղաքականութեան հարցին: Դաշնակցութեան կողմից «Քաղաքական Մօմենտի մասին» ղեկուցում է ներկայացնում Ս. Վրացեան: Ենչտելով այն խանդավառութիւնը, որով ամբողջ Ռուսաստանը ընդունեց յեղափոխութիւնը՝ նա մանրամասն կանգ է առնում երկրում տիրող անկերպարան վիճակի վրա — ընդհանուր հիասթափութիւն երկրի ներսում և ճակատներում: Ռուսաստանը կանգնած է սուր ձգնաժամի առաջ, Պատճառները զօրեղ են և բազմազան: Նախ՝ խանգարած է պետական մեքենան. չկայ հեղինակաւոր իշխանութիւն. անւանապէս գոյութիւն ունեցող պետական մարմինների ազդեցութիւնը կեանքի վրա չնչին է: Ծայրագաւառներում ու գիւղերում տիրում է անիշխանութիւն: Երկիրը շարժում է տարերային կերպով: Վարիչ ձեռք չկայ:

Երկրորդ՝ Խանգարած է երկրի տնտեսական կեանքը: Կանգ է առել արդիւնաբերութիւնը: Օր աւուր զարգանում է քայքայումը: Պարենաւորման ձգնաժամը և ապրուստի թանգութիւնը անտանելի են: Այդ հողի վրա տեղի են ունենում բազմաթիւ խռովութիւններ և ընդհարումներ:

Երրորդ՝ պակաս յուսահատական չեն և երկրի Ֆինանսները: Պատենւրազմը կլանում է միլիարդներ: Պետական եկամուտները պակասում են: Ներմուծում և արտածում կանգ են առել. եկամուտի միակ աղբիւրը մնացել է փոխառութիւնը: Սակայն արաքին փոխառութիւն չի կարելի, որովհետև պետութիւնը դուրսը վարկ չունի: Ներքին փոխառութիւն էլ յաջողութիւն չունի, որովհետև բնակչութեան ունեւոր մասը չի վստահում յեղափոխական կառավարութեան: Կառավարութեան առաջ մնում է միակ վտանգաւոր և անյոյս ճանապարհը — հեղեղել երկիրը թղթաղրամով, որը աւելի է ծանրացնում կեանքը:

Զորերը՝ նոյն քայքայումը տիրում է և ուղղաճակատներում: Զօրքը լքումի է մատուած: Կարգապահութիւնն ընկած, բանակի սովուտութիւնը խորտակւած. զինուորը մերկ է, անօթի և անզէն: Զմեռը դալիս է, բայց ոչ մի պատրաստութիւն չի արւում: Վտանգի մէջ է ոչ թէ լոկ յեղափոխութիւնը, այլ և բովանդակ պետութիւնը:

ի՛նչ անել:

Եւ զեկուցանողը արծարծում է երկու միջոց:

Առաջին՝ երկրում պէտք է ստեղծել զօրեղ իշխանութիւն, որը պէտք լինի կօալիցիօն: Յեղափոխութեան շարժ թուր տարրերը պէտք է կազմեն կուռ ճակատ ոչ միայն կենտրոնում, այլ և ամենայնտին գիւղում: Դէմօկրատիան է իշխանութեան նեցուկն ու հիմքը:

Երկրորդ՝ պէտք է աշխատել լիկելոցիայի ենթարկել պատերազմը, որը աղբիւրն է բոլոր չարիքների: Ներկայ պայմաններում, երբ երկրի բոլոր ուժերը քայքայման վերջին ծայրն են հասել, պնդել թէ պատերազմը պէտք է շարունակել մինչև յաղթական վախճանը, անհեռատեսութիւն է: Սակայն, ինչպէս վերջացնել պատերազմը: Հնարաւոր է միթէ անջատ հաշտութիւն կնքել: Եթէ հնարաւոր է, այդ կը լինէր լաւագոյն ելքը. բայց այդ յոյսը դժար իրագործելի է, որովհետև միայն Ռուսաստանից չէ կախած: Ռուսաստանը համերոպական ընդհանուր շղթայի մի օղակն է և անջատ հաշտութիւնը մի ճակատում, կարող է պատճառ դառնալ նոր պատերազմի մի ուրիշ ճակատում: Հաշտութիւնը կարող է լինել կամ Դաշնակիցների հետ միասին և կամ նրանց համաձայնութեամբ: Ռուսաստանը պէտք է ձգտի հաշտութեան՝ աշխատելով եւրոպական դէմօկրատիան էլ ոտքի հանել յանուն հաշտութեան: Իսկ մինչ այդ պէտք է վարել սչ թէ յարձակողական, այլ պաշտպանողական պատերազմ՝ ամուր պահպանելով զրաւած դիրքերը: Այս հանգամանքը առանձին նշանակութիւն ունի մասնաւորապէս մեզ՝ Հայերիս համար: Հասկանալի է, թէ ինչ կը լինի մեր վիճակը, երբ թշնամու առջեւ ռազմաճակատը սլառուի: Մենք ուրիշներից աւելի ուժ պիտի տանք ճակատի ամրացման և միջոց չխնայենք ճակատի կայունութիւնն ու զինուորների ֆիզիքականն ու բարոյականը բարձրացնելու համար: Ճակատի պաշտպանութիւն և հաշտութիւն — այս ձեւով կարելի կը լինի ապահովել մեր նաճումները Թրքահայաստանում: Նոյնպէս պէտք է նպաստենք ուժեղ իշխանութեան կազմութեան և երկրի քառասյին վիճակի դէմ կուռելու: Դրա համար նախ մեր մէջ եղած հոսանքները պէտք է ըմբռնեն պետութեան և մեր ազգային շահերի ներդաշնակութիւնը և իրագործեն համերաշխութիւն. նոյն զգացումով տողորած պէտք է լինին հայ, թուրք և վրացի աշխատաւոր զանգաւածները:

Հոկտ. 1-ի նիստում քննութեան է առնուում Վրացեանի զեկուցումը: Ի՞նչպէս յետեւից խօսում են հոսանքների ներկայացուցիչները, որոնք համաձայն են գտնուում զեկուցանողի հիմնական մաքերին և համաձայն իրենց



Հայաստանի բանակի և իշխանութեան առաջին զեկուցանողը:



**Ա. Վ. ՀԱԿԱՐԵՆԿՈ**  
Հայաստանի Խորհրդարանի անդամ  
(Ապսուստոսական բոլեւակներից Չանդուղուում)



**Ա. Գ. ԱՂԱՅԱՆ**  
Հայաստանի առաջին ներքին Գործոց նախարար.

աշխարհահայեացքը՝ պարզաբանում ու հիմնաւորում են հիմնական դրութիւնները:

**Գ. Անանուն (ս.-դ.)** — բուրժուազիան չունի քաղաքակրթւած սեփականութիւն, հեռեւաբար և չի կարող դառնալ իրականութեան տէրը. նա պէտք է ընդառաջ գնայ դէմօկրատիայի նւագագոյն պահանջներին և կօալիցիայի մէջ մտնի առանց յետին մտքերի: Կօալիցիան պէտք է լինի իսկական և չպիտի կասկածել դէպի ձախը. կասկած կարող է լինել միայն աջ թեւի վերաբերմամբ: Գալով հայ ազգային քաղաքականութեան մենք չպէտք է ասենք, թէ մեր խրճիթը գիւղի ծայրումն է, մենք մեզանով զբաղւենք, ուրիշները ինչ ուզում են անեն. ընդհակառակը, մենք պէտք է միանանք ռուս դէմօկրատիայի ծովին և լինինք ռուսից էլ աւելի ռուս:

**Լ. Արարեգեան (ս.-յ.)** — խօսում է սօցիալիզմի մասին: Սօցիալիզմը միայն դասակարգային պայքար կամ արդիւնաբերական միջոցների համայնացում չէ, սօցիալիզմը մի ամբողջ կուլտուրա է, որից տակաւին հեռու է Ռուսաստանը: Ռուսաստանի յեղափոխութիւնը սօցիալիստական չէ. դասակարգային հակամարտութիւնը ներկայ պայմաններում վստահար է Ռուսաստանի պետականութեան շահերին: Մեր նպատակը պէտք է լինի պաշտպանել պետականութեան շահերը և իշխանութեան կազմակերպման խնդրում ամբողջապէս ընդունել կառավարութեան դեկլարացիան: Պատերազմի նկատմամբ պէտք է տոկունութեամբ պահել ձախտը: Ազգային քաղաքականութեան հարցում մենք մեր երկրում պէտք է դարբենք մեր բախտը մեր հարեւանների հետ միասին: Մեր բախտը չպէտք է յանձնել կեղոնին, որովհետեւ մենք կեղոնի հետ շատ թոյլ թելերով ենք միացած և եթէ վաղը մի ձեռք կտրի այդ թելը, մենք կը մնանք մեր երկրում բոլորովին մենակ: Մենք պէտք է միանանք մեր հարեւաններին և հողային մաքսիմալ ծրագրի իրականացումը այդ գեղեցիկ միջոցն է, որը պիտի իրար հետ կապի Հային և Թուրքին: Մեր համերաշխութիւնը մեր հարեւանների հետ պիտի աեղի ունենայ ոչ թէ վերին շերտերում միայն, այլ նախ և առաջ ժողովրդի ստորին խւաւերում:

**Ա. Շահխաթունի (դաշ.)** գտնում է, որ բուրժուազիան ստիպւած է ընդառաջ գնալ դէմօկրատիային: Դա իսկական կօալիցիա, ուժերի ներկայացուցչութիւն չէ, այլ թոյլի զիջում: Այդ զիջումը կարելի է երկու կերպ բացատրել. կամ բուրժուազիան ենթադրում է, որ այդ բոլոր ծրագիրները ի չիք պիտի դառնան և կամ իր դասակարգային շահերը զոհաբերում է հայրենիքի շահերին: Հայ բուրժուազիան այդ տեսակէտից աւելի զիջում պիտի անի հայ դէմօկրատիային, որովհետեւ մեր ազգային

գոյութեան խնդիրն է այստեղ վտանգւած: Ընդունելով կառավարութեան ծրագիրը՝ մենք պիտի համախմբենք մեր իրականութեան մէջ, գործենք համերաշխ, աչքի առջ ունենալով պետութեան և մեր ազգային շահերը:

Ք. Վերսիլշեանը (ժող.) խօսում է ռուսերէն, որի դէմ ժողովը բողոքում է. նա ձգնում է ապացուցանել, որ հայ ժողովրդականները «բուրժուազիա» չեն, այլ ապադասակարգային կուսակցութիւն, որը միակն է, որ կանգնած է պետական տեսակէտի վրա: Նա ողջունում է իսկական կօալիցիայի գաղափարը, բայց կօալիցիա չէ, երբ միայն բուրժուազիայից են զիջում պահանջում. դա գերութիւն է: Հրաւիրում է իսկական համերաշխութեան և զգուշացնում ծայրայեղ լոզունգներին: Դէմ է հողային մաքսիմալ ծրագրին, որը Կովկասում կարող է առաջ բերել միայն անկարգութիւններ և ջարդեր:

Ապա յետագայ վիճաբանութիւններին մասնակցում են Ս. Արարատեանը, բժ. Աղաջանեանը, Ս. Խոնդկարեանը, Վ. Նաւասարդեանը, Յ. Քաջաղունին, Հ. Առաքելեանը և Մ. Ղարաբէգեանը: Բացի վերջինից, բոլորը պաշտպանում են կօալիցիայի սկզբունքը և կառավարութեան օգնելու անհրաժեշտութիւնը: Հ. Առաքելեանը ձառում իր միտքը պաշտպանելու համար վկայութեան է բերում Քրիստ. Միքայէլեանին ու Զաւարեանին, որոնց անւանում է «իմ ընկերները»:

Վրացեանը (վերջին խօսք) բողոքում է Հ. Առաքելեանի յայտարարութեան դէմ, որ Զաւարեանին և Քր. Միքայէլեանին իրեն ընկերներ անւանեց: Ապա առանձին-առանձին պատասխանում է եղած հակաձառութիւններին և շեշտում, որ Հայ ժողովրդական կուսակցութիւնը հայ բուրժուազիայի կուսակցութիւնն է և պաշտպանում է բուրժուական գաղափարախօսութիւն: Մեզ մօտ բուրժուազիան դեռ ևս զիտակեց ու դասակարգօրէն կազմակերպւած չէ, դրա համար էլ ամաչում է, երբ իրեն բուրժուա են ասում, մինչդեռ պէտք է ողջունել, որ, վերջապէս, մեր բուրժուազիան էլ սկսում է հասունանալ ու կազմակերպւել: Անցնելով Լ. Աթաբէգեանի յայտարարութեան, թէ այսուհետև Սօց.-Յեղափոխականները հայ կեանքի պատասխանատու գործի մի մասը իրենք են վերցնելու, ողջունում է այդ յայտարարութիւնը, բայց պնդում է, որ, վերջին հաշուով, հայ էսէրներն էլ անելու են այն, ինչ որ մինչև այժմ արել է Հ. Յ. Դաշնակցութիւնը, որովհետև հայ միջավայրի մէջ ուրիշ անելիք չկայ:

Ապա կարդում է իր բանաձեւը.

«Ի նկատի ունենալով, որ ռուսական ներկայ դեմօկրատական յեղափոխութեան ապահովութիւնն ու յաղթանակը կախւած է նրանից, թէ ինչ

ուղղութեամբ կընթանայ դեմօկրատիայի կազմակերպումն ու զարգացումը և ինչպիսի փոխյարաբերութիւններ կստեղծւին յեղափոխութեան մղում տուող հասարակական խաւերի միջև.

«Որ պետութեան ռազմաճակատում» ու թիկունքում տիրող տնտեսական, քաղաքական, ռազմական և կուլտուրական աննպաստ պայմանների շնորհիւ մեծապէս դժւարանում է պատերազմը վարելու և երկրի ներսում անդորրութիւն հաստատելու գործը.

«Որ իշխանութեան կազմակերպման խոչընդոտները յեղափոխութեան եօթն ամիսների ընթացքում անկող և սուր կերպով դուրս լինելով երկրի առջև՝ շարունակ յուզել են հանրային կեանքը.

«Որ կառավարական մարմինների ֆունկցիաների մի խոշոր մասը պատւաւոր կերպով տարել են յեղափոխական օրգանները և դեմօկրատիկ խորհուրդները, զինւորական կոմիտէները և այլն.

«Որ օրէ օր աճող տնտեսական ու քաղաքական անիշխանութիւնն ու քայքայումը և յեղափոխութեան շահերը հրամայական պահանջ են դարձնում ուժեղ իշխանութեան կազմակերպումը կենտրոնում ու բովանդակ երկրում և բոլոր յեղափոխական դասակարգերի և ժողովուրդների համագործակցութիւնը:

«Այլ և աչքի առաջ ունենալով Անդրկովկասի և հայ իրականութեան բացառիկ պայմանները, ազգային ու դասակարգային յարաբերութիւնների անորմալութիւնը, հասարակական խաւերի թոյլ կազմակերպւած լինելն ու համագործակցութեան բացակայութիւնը, ինչպէս նաև արտակարգ տաղանապալի հեռանկարը պատերազմի անյաջողութեան դէպքում կուկասեան ռազմաճակատի վրա,

«Ազգ. Խորհրդաժողովը որոշում է.

«1. Ողջունել կազմակերպումը նոր իշխանութեան, որն իր յայտարարած դէկլարացիայով խոստանում է իրագործել այն բոլոր պահանջները, որ դեմօկրատիան ձեւակերպել էր օգոստ. 14-ի դէկլարացիայի մէջ, և անպայման վստահութիւն յայտնել և աջակցութիւն ցոյց տալ նրան:

«2. Հաւանելով կառավարութեան ձգտումը փութացնելու հաշտութեան կնքումը Դաշնակիցների հետ և Ռուսաստանի պարտութիւնը համարելով մահ նաև յեղափոխութեան՝ համախորհուրդը անհրաժեշտ է գտնում նպաստել նաև զօրքի վերակազմութեան, ճակատի ու թիկունքի ամրացման, որպէսզի ռուսական բանակները պահեն բռնած ռազմագծերը և պաշտպանեն երկիրը թշնամու ներխուժումից:

«3. Զեռք առնել վճռական միջոցներ երկրի տնտեսական կեանքը և

պտրենաւորման գործը բարեկարգելու, նշանակել պետական կօնտրօլ արաադրութեան և բաշխման վրա: Բարձրացնել արդիւնաբերութեան արտադրութիւնը՝ առողջ փոխյարաբերութիւն ստեղծելով արդիւնաբերող և գործաւոր դասակարգերի միջև: Արտադրութեան և բաշխման գործում լայն աեղ տալ համագործակցական հաստատութիւններին: Հաստատուն գներ նշանակել գիւղի և քաղաքի արտադրած ապրանքների վրա: Պարենաւորման գործի կազմակերպութեան հրաւիրել տեղական ուժերը՝ յանձին քաղաքային և գաւառական ինքնավարութիւնների ու կօօպերատիւնների: Ընդունել առաջին կարգի անհրաժեշտ աւարկաների համար մենավաճառի սկզբունքը:

“4. Պետութեան եկամուտն աւելացնելու նպատակով ընդունել պարտադիր փոխառութեան սկզբունքը: Հարկ դնել և եղածներն աւելացնել պերճանքի առարկաների և ժառանգութեան վրա: Կրճատել պետութեան ծախսերը խիստ խնայողութեան միջոցով:

“5. Ազգային և հողային հարցի վերջնական լուծումը վերապահելով Սահմ. Ժողովին՝ ճանաչել ազգերի կուլտուրական ինքնորոշման և լեզուի իրաւունքները պետական բոլոր հաստատութիւնների մէջ: Բարեկարգել յարաբերութիւնները հողատերերի և գիւղացիների միջև: Օրէնսդրական նիւթ պատրաստել ազգային և հողային հարցերի մասին Սահմ. Ժողովի համար:

“6. Մինչև պետական ռամկավար օրգանների վերջնական կազմակերպումն ու ամրացումը ճանաչել դէմօկրատական խորհուրդների իրաւասութիւնները և ապահովել նրանց անկաշկանդ գործունէութիւնը:

“Անցնելով Անդրկովկասի և հայ իրականութեան, որ մասն է կազմում ընդհանուր պետութեան, և ընդունելով, որ վերոյիշեալ պահանջները տարածելու են այստեղ, խորհրդածողը հարկ է համարում շեշտել հետեւեալը.

“1. Անհրաժեշտ է ուժեղ թափով առաջ տանել հայ դէմօկրատիայի կազմակերպումը:

“2. Գիտակցելով, որ Անդրկովկասի խաղաղութիւնն ու բարգաւաճումը հնարաւոր է միայն բոլոր ազգերի, մանաւանդ նրանց աշխատաւոր մասերի հաւաքական ջանքերով՝ ձգտել իրականացնել հայ, վրացի, թուրք և այլ աշխատաւորութեան համերաշխութիւնը և բոլորի հետ միասին եղբայրական ձեռք մեկնել համառուսական դէմօկրատիային:

“3. Շտապեցնել Անդրկովկասում մտցնել դէմատուրյական հաստատութիւններ՝ նախօրօք կատարելով նահանգների վարչական բաժանում՝ ղեկավարելով տեղակազրական, ազգագրական և սոստեսական սկզբունքներով:

“4. Հայկական ներքին կեանքում առաջ բերել բոլոր կազմակերպած և իրական արժէք ներկայացնող հասանքների համագործակցութիւն՝ փութացնելով քառանդամ եղանակով ընտրւած ազգային ժողովի գումարումը:”

Բանաձևեր են առաջարկում և միւս կուսակցութիւնները, որոնք բոլորն էլ կօալիցիայի կողմնակից են: Բօլշեւիկները միայն բանաձև չեն առաջարկում և դէմ՝ արտայայտւում կօալիցիայի: Դժբախտաբար, միւս բանաձևերը ձեռքի տակ չունինք, այլապէս շատ հետաքրքրական կլինէր հրատարակութեան տալ: Ներկայացւած բանաձևերը հաշտեցնելու և մի ընդհանուր բանաձև կազմելու համար ընտրւում է 10 հոգինոց յանձնաժողով երկուական հոգի ամէն մի կուսակցութիւնից. Արարատեան, Վրացեան, Լ. Աթաբէգեան, Յ. Տէր Օհանեան, Մ. Պապաջանեան Բ. Վէրմիշեան, Յ Մանանդեան և բժ. Իսախանեան:

Հոկտ. 2-ի նիստում համագումարը միաձայնութեամբ ընդունում է քաղաքական մօմենտի մասին յանձնաժողովի մշակած հետեւեալ բանաձևը. —

“Նկատելով, որ Ժամանակաւոր Կառավարութիւնը այժմ՝ աւելի քան երբեք կարիք ունի Ռուսաստանի բոլոր ժողովուրդների անվերապահ աջակցութեան և որ յեղափոխական 7. ամիսները ընթացքում տեղի ունեցած իրադարձութիւնները ցոյց են տալիս, թէ անհնար է ստեղծել երկրի մէջ ուժեղ պետական իշխանութիւն առանց այդպիսի աջակցութեան. նաև ի նկատի ունենալով, որ նոր կառավարութեան սեպտ. 25-ի հրատարակած դեկլարացիան իր բովանդակութեամբ համապատասխանում է ստեղծւած իրական պայմաններին, ընդգրկում է իր մէջ ներկայ քաղաքական վայրկեանի հրամայական պահանջները և իր յայտարարած սկզբունքներով գոհացուցիչ պատասխան է տալիս նաև հայ ժողովրդի մինչև Սահմ. ժողովն ունենալիք պահանջներին՝ — Ռուսահայ Ազգային խորհրդածողութիւնը, ռուսական մեծ յեղափոխութեան հետեւանքով առաջին անգամ գումարւած ազատ պայմաններում, յայտնում է իր բացարձակ վստահութիւնը Ժամանակաւոր նոր Կառավարութեան և իր կատարեալ աջակցութիւնը բոլոր տրամադրելի միջոցներով:”

Բւէարկութեան չեն մասնակցում մէնշեւիկները, որոնք արձանագրութեան մէջ են մոցնում իրենց առանձին բանաձևը: Նոյն նիստում կարդացւում է նաև բօլշեւիկների յայտարարութիւնը, որով նրանք յայտնում են, թէ իրենք բոյկոտի են ենթարկել համագումարը և ո՛չ մի ներկայացուցիչ չունեն այնտեղ:

Համագումարի 4-րդ նիստում քննութեան է աւանում վերաբերումը դէպի Անդրկովկասի Առանձին Կոմիտէն, որի մասին զեկուցումներ են

ներկայացնում է. Առաքելեանը և Ն. Աղբալեանը: Անդրկ. Առանձին Կոմիտէն նշանակել էր Ժամ. Կառավարութեան կողմից 1917-ի մարտին և անմիջապէս ենթարկելով կենդրոնական կառավարութեան՝ Հանդիսանում էր Անդրկովկասի տեղական բարձրագոյն գործադիր իշխանութիւնը. ուրիշ խօսքով՝ նա կատարում էր փոխարքայի դերը: Առանձին Կոմիտէի կազմն էր. երկու վրացի՝ Ա. Չխէնկելի և Ք. Աբաշիձէ, 1 ռուս՝ Խարլամով, 1 թիւրք՝ Ջաֆարով և 1 հայ՝ Մ. Պատաշանեան: Անշիղ, անգոյն և ներքին հակասութիւններով ու ազգային էնթրիկներով հարուստ մարմին էր այլ:

Հ. Առաքելեանը (ժող.) գտնում է, որ Անդրկովկասի Առանձին Կոմիտէն չարդարացրեց իր վրա դրած յոյսերը: Նրա անշնորհք գործունէութեան հետեւանքով երկրի շփոթ վիճակը սաստկացաւ: Աւաղակութիւնները սովորական երևոյթների կարգն անցան: Երկրում միլիցիա չկազմեց: Նրա լիազօրներն ու հրահանգիչները գաւառում աչքի ընկնող գործ չկատարեցին: Պատճառը ոչ թէ Առանձին Կոմիտէի անկարողութիւնը կամ չկամեանքն էր, այլ որովհետև պետութեան կենդրոնական իշխանութիւնն էլ թոյլ է: Միւս կողմից՝ Առանձին Կոմիտէն կազմելով ազգային սկզբունքով՝ չկարողացաւ իր շուրջն համախմբել բնակչութիւնը. իւրաքանչիւր ազգ խմբեց իր ներկայացուցչի շուրջը: Առաջ եկաւ մի քանի իշխանութիւն, յաճախ, իրար հակասող ու տարբեր գործելակերպով: Պէտք է Առանձին Կոմիտէն կազմել 7 անդամից. 4 դրսից (սօցիալիստ ու կադէտ) և 3 տեղական ազգերի ներկայացուցիչներից:

Ն. Աղբալեան յիշում է ընդհանուր խանդավառութիւնը Առանձին Կոմիտէն ընդունելիս և առաջացած հիասթափութիւնը: Կովկասեան ազգերից իւրաքանչիւրը համախմբեց Առանձին Կոմիտէի կազմի մէջ ունեցած իր ներկայացուցչի շուրջը՝ ծառայելով նրան զօրեղ յենարան: Ամենից թոյլ յենարանը գտաւ հայ ներկայացուցիչը, որովհետև նա չէր պատկանում այն հոսանքին, որ ամենից զօրեղն է հայ կեանքում: Շուտով երեւաց, որ կովկասեան կառավարութիւնը վարում է ոչ թէ պետական, այլ ազգային քաղաքականութիւն, որ Առանձին Կոմիտէի ամեն մի անդամը վարում է իր ազգային քաղաքականութիւնը՝ պետական իշխանութիւնը իր ազգի շահերին ծառայեցնելով: Այդտեղ էլ մեր ներկայացուցիչը ամենից թոյլը գտնեց, որովհետև նա իր քայլերը կատարում էր ոչ ազգի բազմութեան ձայնը ներկայացնող հոսանքների խորհրդատուութեամբ: Կովկասեան կառավարութեան գրութիւնը աւելի եւս խախտեց, երբ Պետրօգրադում լուծեց առաջին Ժամանակ. Կառավարութիւնը, ուրեմն Առանձին Կոմիտէն զրկեց և այդ յենարանից: Հետեւանքը եղաւ այն, որ

մենք այդ վեց ամսւայ ընթացքում ունեցանք կառավարիչներ, բայց ոչ կառավարութիւն: Երկրի վիճակը գնալով աւելի ևս վատթարացաւ, ազգերի մրցակցութիւնը զօրացաւ: Դրա մի գլխաւոր պատճառն էլ այն էր, որ կառավարութեան մէջ գերիշխանութիւն ձեռք բերեց վրացական սօցիալ-դեմօկրատիան. սա իր կուսակցական դրօշակի տակ յաճախ առաջ էր մղում ազգային խնդիրներ, գերիշխանութեան ոյժ տալով վրացական ազգին, մեկուսացնելով հայ ժողովուրդը և յանձին Դաշնակցութեան՝ հեռու պահելով նրան իշխանութիւնից:

Կառավարութեան թուլութեան մի պատճառն էլ այն էր, որ նա չունէր գործակալներ, որ ենթարկէին նրան, կատարէին նրա հրամաններն ու կարգադրութիւնները: Կարծէք նա մի յանձնախումբ էր, որ կարգադրութիւններ էր անում չկատարելու, թղթի վրա մնալու համար: Այս կարգադրութիւնների մէջ էլ մեր ժողովուրդը ամենից թոյլ մասնկցութիւն ունէր: Պատճառը հայ ներկայացուցչի անձնական թուլութիւնը չէ, այլ հայ ժողովրդի ինքնազգացման թուլութիւնը: Բազմաթիւ են հայ ինքնազգացման թուլութիւնը առաջացնող պատճառները, որոնցից թւենք մի քանի կարեւորագոյնները.

1) Որ հայ ժողովուրդը մեր երկրում միապաղաղ տարր չի ներկայացնում. նա ամէն տեղ ապրում, շփում է այս կամ այն օտար ազգի հետ, որոնցից իւրաքանչիւրն ունի իր ազգային տենչերն ու ձգտումները, որոնց հետ ընդհարելով հայ ժողովուրդը՝ նախ յետ է մնում իր յառաջդիմութեան մէջ. երկրորդ՝ թուլանում է ազգային ինքնազգացումը: Ուրիշ խօսքով ասած՝ հայ ժողովրդի ինքնազգացման թուլութեան մի պատճառը պայքարի բազմաձևատուութիւնն է:

2) Որ մենք դեռ ԺԱ. դարից սկսած հեռու ենք եղել իշխանութիւնից, չենք ունեցել իշխանական դասակարգ, իշխելու տենչ և ունակութիւն ունեցող խաւ. մինչդեռ մեր հարեան Թուրքերն ու Վրացիները մինչև այսօր էլ ունին այդպիսին, որին ռուս կառավարութիւնը ձեռք էր մեկնում և հաճութեամբ իշխանութեան այս կամ այն բաժինը յանձնում: Սա պատմական մի փաստ է, որի հանդէպ չպէտք է աչք փակել:

3) Որ մենք ոչ միայն չենք ունեցել, այլ և միշտ խուսափել ենք իշխանութիւնից, որովհետև հայը շարունակ օտար իշխաններ է տեսել՝ մէկը միւսից վատ և այլանդակ: Եւ եթէ մի հայ պետական պաշտօնեայ է դարձել, հայ ժողովուրդը նրան վերաբերել է բոլորովին այլ տրամադրութիւններով: Այն ինչ, մեր հարեւանները իշխանութեան մասնակցել են զօրեղ չափով, մանաւանդ վրացիները, և եթէ վաղը Վրաստանը կամենայ ինքնավարութիւն ստեղծել և ամբողջ իշխանութիւնը վրացիներով վարել,

առանձին դժարութեան չպէտք է հանդիպի: Ուրիշ խօսքով, հարեւանների ինքնազգացումը տիրողի է, մերը՝ հպատակի:

4) Որ հայ մտաւորականութեան գլխաւոր ուշադրութիւնը դարձած է եղել ոչ թէ մեր երկրի, այլ Տաճկահայաստանի վրա, որով մենք տեղական հարցերը լուծելու ունակութիւնից զրկւած ենք մնացել: Մեր մտաւորականութիւնը մեծ մասով ազգային կրթութիւն ունենալով՝ իր շարքերում քիչ է տւել ընդհանուր ցցուն դէմքեր. եղածներն էլ գլխաւորապէս կապւած են եղել Տաճկահայաստանի հետ:


5) Մրանց կողքին, հայ ժողովրդի վրա շատ խոշոր ազդեցութիւն ունեցաւ նաև թրքահայերի վերջին կոտորածն ու գաղթականութիւնը, որը զրաւեց մեր ամբողջ ուշադրութիւնը, մեր բոլոր ուժերը և հեռու պահեց նրանց իշխանութեան մէջ ունենալիք հնարաւոր մասնակցութիւնից: Կոտորածն ու գաղթականութիւնը փշրեցին հայ ժողովրդի թեւերը: Միւս կողմից այն ծանր կացութիւնը, որի մէջ ապրում է այժմ հայ ժողովուրդն ազգովին, թուլացնում է մեր ազգային ինքնազգացումը և շեղում մեր ազգային կամքը, որի հետեւանքով մենք ստիպւած ենք դբադւելու ոչ թէ իշխանութեան յեղափոխութեան խնդիրներով, այլ մեր ֆիզիքական գոյութեան հարցով:

Կորնիլովեան ապստամբութիւնից յետոյ, Անդրկովկասում ևս կաղմեց յեղափոխական իշխանութիւն, որի մէջ տիրող դերը ստանձնեց վրացական սօց. -դէմօկրատիան: Հայ ժողովուրդն զրկւեց այնտեղ, յանձին Դաշնակցութեան, մասնակցութեան հնարաւորութիւնից, որովհետև յայտարարւեց նախօրօք, որ այդ իշխանութիւնը պէտք է կազմւած լինի սօցիալիստական տարրերից, իսկ Դաշնակցութիւնը, որի ետեւից դնում է հայ ժողովրդի ճնշող մեծամասնութիւնը՝ աշխատաւորութիւնը, յայտարարւեց ոչ-սօցիալիստ:

Այս երեւոյթը անբնական է և անարդար. իշխանութիւնը չպէտք է թողնի բախտի խաղին. նրա մէջ պէտք է վերականգնւի ուժերի հաւասարակշռութիւն, որովհետև առանց դրան իշխանութիւնը չի կարող լինել օգտակար և արդար: Այս տեսակէտով, անհրաժեշտ է մի չէզոք, ղեկավար ասարը կովկասեան իշխանութեան մէջ, որը սանձէր ուժեղի ոտնձգութիւնը և պաշտպանէր թոյլի իրաւունքները: Կովկասեան ապագայ կառավարութիւնը պէտք է լինի կօալիցիօն, 7 հոգուց. 4 կենտրոնից, ոչ տեղական ազգերից, 3 կովկասեան երեք գլխաւոր ազգերից, մէկ-մէկ հոգի իւրաքանչիւր ազգից և անպայման այն հոսանքից, որը ամենաագրեցիկն է այդ ազգի մէջ: Ազգային ներկայացուցիչներից իւրաքանչիւրը




Մարտի 3-ի Կոտորածի փրկարարը



Ս. Ք. ՔԱՅԻՆՅԱՆԻ ԳԵՂԱՍՏՅԱՆՆԻ



Ա. ԱՆՏՈՆՅԱՆ  
Հայաստանի Պատ. նախագահը:



Վ. ՕՉԱՆՉԱՆՅԱՆ  
Հայաստանի երկրի վարչապետը:

իր կողքին կունենայ ազգային խորհուրդ՝ կազմված իր ազգի մեջ եղած բոլոր հասանքներից:

Հինգերորդ նիստում վիճաբանութեան են դրուում նախորդ զեկուցումները:

Սիւս. Փիտումանը (մենչեիկ) խօսում է ուսերէն, որի դէմ ամէն կողմից բողոքներ են լուում: Նա քննադատում է Առանձին Կոմիտէի ազգային հիմքը, կողմնակից է կօալիցիայի և դէմ՝ դրսից «վարեադ» ներ բերելուն: Իր ճառի մեջ մի շարք փողոցային հայհույանքներ է ուղղում դաշնակցականների հասցէին (բանդիտներ ևն.): Պոռթկում է ընդհանուր բողոք ու զայրոյթ: Նախագահ Լ. Աթաբեգեանը յանդիմանում է Փիտումանին և պահանջում ներողութիւն խնդրել: Ժողովը խառնում է և քշում ճառախօսին ամբիոնից:

Ա. Երզնկեանը սօց.—դէմօկրատական ֆրակցիայի կողմից ներողութիւն է խնդրում Փիտումանի խօսքերի համար: Ապա քննադատում է Առանձին Կոմիտէի ազգային բնոյթը: Մօտ լինելով Առանձին Կոմիտէին, նա վիպում է, որ կոմիտէի անդամների առանձնասեռակները մի—մի դաւադրական վայրեր են, ուր դաւեր են հիւթում ոչ միայն իրար դէմ, այլ և ազգերի դէմ: Մի դժբախտ պատահականութեամբ Զաֆարովի և Պապաջանեանի սենեակները գտնուում են իրար մօտ և դռները բացուում են իրար մէջ, կարծէք միմեանց գործողութիւնները ղիտելու համար: Եւ պէտք է տեսնել, թէ ինչէն են տեղի ունենում այնտեղ: Պէտք է վերակազմել իշխանութիւնը սօցիալիստական հիմքերով: Կովկասի կառավարութիւնը պէտք է կազմել միայն սօցիալիստներից, և Դաշնակցութիւնը, իբրև ազգային և ոչ—սօցիալիստական կուսակցութիւն, տեղ չպիտի ունենայ այնտեղ: Կարիք չկայ դրսից չէզոք տարրեր հրաւիրելու, սօցիալիստ լինելու հանգամանքը բաւական է, որ իշխանութիւնը Կովկասում տարւի ապազգային, պետական ուղղութեամբ: Եւ յետոյ մի շարք մեղադրանքներ է ուղղում դաշնակցականների հասցէին, որոնք իբրև թէ, «վարում են թիկունքի քաղաքականութիւն»:

Մ. Թարուքիւնեանը (ժող.) Առանձին Կոմիտէի թուլութեան պատճառը գտնում է ոչ թէ նրա ազգային կազմի, այլ ազգայնական բնոյթի և ընդհանուր պետական պայմանների մէջ: Կովկասի իշխանութիւնը պէտք է հիմնել ազգային սկզբունքներով. ազգերի ինքնորոշումը յեղափոխութեան նւաճումներից մէկն է: Նա ևս հակառակ է դրսից չէզոք մարդկանց հրաւիրելու մտքին: Կովկասի կառավարութիւնը պէտք է կազմի մի ընդհանուր կօմիսարից (ոչ—կովկասցի) և երեք օգնականներից՝ հայ, վրացի, թիւրք:

1821-2002



Առանձին Կոմիտէի Հարցի քննութիւնը շարունակուում է և վեցերորդ նիստում, ուր, ի միջի այլոց, մի ուժեղ ճառ է արտասանում Խ. Կար-  
ձիկեանը, որ հերքում է Դաշնակցութեան դէմ եղած մեղադրանքները :  
“Ասում են, որ մենք գործում ենք կովկասեան դէմօկրատիայի թիկուն-  
քում և այդ է հայ ժողովրդի մեկուսացման պատճառը : Ճիշտ է այդ :  
Փաստ է, որ թիւրք դէմօկրատիա գոյութիւն չունի . հայ դէմօկրատիան  
ինքն իր թիկունքում գործել չի կարող : Նշանակում է, մնում է վրաց  
դէմօկրատիան—սօցիալ-դէմօկրատիան : Եւ մեզանից պահանջում են, որ  
մենք նրա յեռնից գնանք : Բայց միթէ հնարաւոր է այդ : Ո՛չ, յեռնից  
գնալու մասին խօսք լինել չի կարող . խօսք կարող է լինել միայն հետք  
գնալու մասին, և այդ բանն է, որ վրաց սօցիալ-դէմօկրատիան չի ուզում  
ընդունել : Պահանջում են, որ Դաշնակցութիւնը լինի ստորագրատի կամ  
խնդրողի դերում : Դա և՛ անպատուաբեր է, և՛ աննպատակալարմար,  
որովհետեւ անկարելի է, որ մի ամբողջ ժողովրդի դէմօկրատիայի կազմա-  
կերպութիւնը խնդրողի դեր ստանձնի մի հարեւան ժողովրդի դէմօկրա-  
տիայի հանդէպ” :

Մի շարք ուրիշ ճառախօսներից յետոյ, յուզած կերպով պաշտպան-  
ւում է Առանձին Կոմիտէի անդամ Մ. Պարպաչանեանը, որ Կոմիտէի  
թուլութեան պատճառը տեսնում է պետական իշխանութեան ընդհանուր  
թուլութեան մէջ : Եւ երկար կանգ է առնում իր հրաժարականների վրա  
— “Իմ պաշտօնավարութիւնը եղել է հրաժարականների մի շարք” :  
Վերջում հերքում է Երզնկեանի պնդումը, թէ իր “առանձնասենեակը  
եղել է դաւադրութիւնների վայր” : Դէմ է արտայայտուում դրսից չէզոք  
տարրեր բերելուն, “որովհետեւ մենք և մեր հարեւանները ձգտում ենք  
ինքնավարութեան, իսկ այստեղ ուրիշին են ուզում յանձնել մեր իշխա-  
նութիւնը” : Կառավարութիւնը պէտք է յանձնել սօցիալիստներին, որով-  
հետեւ միայն սօցիալիստական իշխանութիւնը կարող է հեղինակութիւն  
ունենալ լայն զանգաւանների մէջ” :

Ն. Աղբաշեանը, իբրև վերջին խօսող, մի ոգեշունչ ճառով մէկիկ-  
մէկիկ հերքում է հակառակորդների ամբաստանութիւնները : Ժողովը  
լարած հետեւում է նրա հիանալի ճառին, որը յաճախ ընդհատուում է  
պատգամաւորների և հանդիսականների խանդավառ ծափերով : Վերջա-  
ցում է մի ապաւորիչ պատկերով, որի մէջ Դաշնակցութիւնը նմանե-  
ցնում է վարպետ դարբինի, որ փոքրիկ մուրճը ձեռքին վարում է  
աշխատանքը, իսկ միւս կուսակցութիւնները՝ մուրճ խփող աշկերտի : Հէնց  
որ աշկերտներից մէկը սխալմամբ մուրճը փոխանակ երկաթին խփելու՝  
խփի վարպետի ձեռքին, սա իր մուրճով կը զարնէ նրա գլխին և կը հրաւիրէ

կարգի ճառի այս համեմատութիւնը ծայր աստիճանի ջղայնացնում է  
ոց.—յեզպափոխականներին և սօց.—դէմօկրատներին, որոնք ազմով հեռա-  
նում են ժողովից և խորհրդակցելուց յետոյ որոշում են, իբրև բողոք,  
չմասնակցել այս նիստին :

Յաջորդ նիստը, հոկտ. 5-ին, գրեթէ ամբողջապէս զբաղուում է այս  
միջադէպով : Առ. Ջիլիեզարեանը կարդում է դաշնակցականների կողմից  
մի պատճառաբանած բանաձեւ, որով պարզում է Դաշնակցութեան  
դերը համագումարում : Կուսակցութեան նպատակն է “հայ ժողովրդի բոլոր  
գործօն տարրերի հետ համաձայնութեան գալ այն գործնական միջոցների  
վերաբերմամբ, որոնք իրապէս պիտի ապահովեն ազգամիջեան համերաշ-  
խութիւնը Կովկասում և գործակցութիւնը համառուսական դէմօկրատիայի  
հետ, յանուն հայ աշխատաւոր ժողովրդի կենսական շահերի և ռուսական  
մեծ յեղափոխութեան յաղթանակի” :

Ժողովրդական կուսակցութեան կողմից Մ. Պարպաչանեանը բողոքում  
է, որ ժողովից հեռացողները արգելք են լինում համագումարի բնականօրն  
պարագմունքներին և դատապարտում է նրանց քայլը : Անկուսակցական-  
ների կողմից Յ. Մանանդեանը նոյնպէս բողոքում է կուսակցական  
պայքարի դէմ և հրաւեր է կարդում համերաշխութեան :

Այս յայտարարութիւններով միջադէպը համարուում է փակած :  
Հոկտ. 6-ի նիստում քննուում է վարչական բաժանումների հարցը,  
որի մասին զեկուցում է ներկայացնում Ս. Կարևարեանը (անկ.) . —  
“Անդրկովկասի վարչական սահմանները, ասում է նա, ռուսական տիրա-  
պետութեան տակ մի քանի անգամ են փոխել : Ներկայ սահմանները  
մտցւած են 60-ական թւականների վերջում : Նահանգների, գաւառների և  
գիւղական հասարակութիւնների սահմանները գծելիս ռուս կառավարու-  
թիւնը ղեկավարել է ոչ թէ տնտեսական, ցեղագրական ու վարչական  
նկատումներով, այլ բոլորովին մութ հաշիւներով : Վերջերս ձգտում էր,  
որ քրիստոնեայ և գլխաւորապէս հայ ազգաբնակութիւնը մի վայրում  
մեծամասնութիւն չկազմի : Դրա համար ժողովուրդը միշտ յարուցել է  
սահմանափոխման հարցը, բայց միշտ էլ մերժել է : Վերջին անգամ հին  
կառավարութեան օրով, յարուցւեց 1916-ին, երբ զէմստիօ մտցնելու  
խնդիրը դրւեց : Այս փաստերով և թւերով ցոյց է տալիս գոյութիւն  
ունեցող սահմանների վրասակարութիւնը և առաջարկում է նոր բաժա-  
նումներ կառարել ազգային սկզբունքով, վերագծել նահանգների, գաւառ-  
ների և գիւղաշրջանների սահմանները, որով կստեղծւի հայկական մի  
ըջան՝ Երեւան կեդրոնով, որ տնտեսական և քաղաքական մէկ միութիւն  
կը կազմէ : Այդ ըրջանը կը կազմւի ամբողջ Երեւանի նահանգից, Կարսի

երկու հարեւան գաւառներից, Թիֆլիսի երկու գաւառներից և Գանձակի լեռնային շրջանից — 15 գաւառ, որից 10-ի մէջ կը լինի հայկական մեծամասնութիւն 2,330,000 ազգաբնակութեամբ, որից 1,220,000 հայ — 60%:

Գ. Խասխանանը (դաշ.), անում է լրացումներ, առանձնապէս շեշտում է տնտեսական գործոնների դերը և դէմ է արտաշախուռում մէկ նահանգ ստեղծելուն: Նա առաջարկում է կազմել հայկական երեք նահանգ մեկնելով գործնական նկատումներից:

Ղ. Տեր-Ղազարեան — Սօց.—Դէմօկրատների կողմից ընդունում է սահմանաբաժանման համար առաջարկած սկզբունքը և առաջարկում է հարեւանների հետ համաձայնութեան դալ, միասին կատարել սահմանաբաժանումը: Դէմ է մէկ կամ երեք նահանգի. դա կարող է հարեւանների մէջ կասկածներ առաջ բերել: Պէտք է գաւառային միութիւններ կազմել, կանտոնալ սիստէմով: Անդրկովկասի կենտրոնը պէտք է լինի Թիֆլիսը:

Ա. Խոնդկարեանը (ս.-յ.), անհրաժեշտ է գտնում սահմանադրումը վարչական տեսակէտով: Պէտք է հայերը, թիւրքերը և վրացիները միասին կատարեն այդ աշխատանքը: Կանտոնալ սիստէմը աւելի առաւելութիւններ ունի, բայց հաղիւ թէ կառավարութիւնը համաձայնի: Յամենայն դէպս, պէտք է կանգնել կանտոնալ սիստէմի վրա, եթէ այդ չանցնի — նահանգային:

Բ. Վերմիշեանը յայտնում է, որ Հայ Ժող. կուսակցութիւնը սահմանափոխման վրա նայում է զուտ վարչական-տնտեսական տեսակէտից և ընդունում է 3 նահանգի դրութիւնը. մի նահանգ կազմելու դէպքում հարեւանները կարող են դայթակղել, թէ հայերը քաղաքական ձգտումներ ունին:

Ա. Շանխարունին (դաշ.) մանրամասն պատմութիւնն ու վերլուծութիւնն է անում սահմանագծման հարցի և պաշտպանում է Կամսարականի առաջարկած նախագիծը: Գործնական նկատումներով դէմ է կանտոններին: Պէտք է պահել նահանգային սկզբունքը: Դէմ է Թիֆլիսը ամբողջ Անդրկովկասի կենտրոն դարձնելուն:

Ա. Երզնկեանը (ս.-դ.) նորից բուռն կերպով յարձակում է Դաշնակցութեան վրա, որը այս խնդրում էլ վարում է թիկունքային քաղաքականութիւն. մէկ կամ երեք նահանգ պահանջելով, նա ուզում է հայկական տէրիտորիա ստեղծել, որ շօվինիզմ է: Դրա համար իրենք պնդում են կանտոնների վրա:

Ապա ընտրում է յանձնախումբ հաշտեցնող բանաձեւ կազմելու

համար: Յանձնաժողովն ընդհանուր դժերով իւրացնում է Կամսարական-Շահխարունու ծրագիրը, որը և վաւերացում է համագումարի կողմից:

Հոկտ. 8-ի նիստում քննում է դպրոցական խնդիրը: Հիմնաւորած զեկուցում է կարդում Ս. Տիգրանեանը (դաշն.) պաշտպանելով դպրոցների ազգայնացման, եկեղեցական-ճխական դպրոցների աշխարհականացման տեսակէտը: Զեկուցման մտքերն ընդունում են ընդհանուր ժողովի կողմից:

Հոկտ. 9-ին, նիստի նախագահ Ղ. Տեր-Ղազարեանը յայտնում է, որ աւագների խորհուրդը երէկ գիշեր մինչև ժամի 2 և այսօր մինչև ժողովի բացումը խորհրդակցելով՝ եկել է հետեւեալ համաձայնութեան համագումարի կողմից ընտրելիք խորհրդի և Գործադիր Մարմնի կազմի մասին.

1) Մեծ Խորհուրդը կամ Խորհրդաժողովը պէտք է ներկայացնի համագումարի պատկերը. իւրաքանչիւր հոսանք ներկայացուցիչ պիտի ունենայ իր թւի համեմատ: Խորհրդակցական ձայնով կը հրաւիրւին ներկայացուցիչներ մի քանի քաղաքներից և հաստատութիւններից:

2) Գործադիր Մարմինը կամ Ազգային Խորհուրդը բաղկանալու է 6 դաշնակցականներից, 2-ական հոգի սօց.-դէմ., սօց.-յեղ. և ժող. և 3 չէզոքներ անձնական ընտրութեամբ, ընդամենը 15 հոգի:

Հոկտ. 9 ի երեկոյեան նիստը զբաղւում է Մեծ Խորհրդի և Գործադիր Մարմնի իրաւասութիւնների որոշումով և յանձնում է Աւագների Խորհրդին պատրաստել մի բանաձեւ:

Ա. Յարութիւնեանը (ժող.), զեկուցում է պարենաւորման տագնապի մասին:

Յաջորդ նիստերի մասին, դժբախտաբար, նիւթ չունինք ձեռքի տակ, բայց այսքանն էլ բաւական է պարզ գաղափար կազմելու համար համագումարի աշխատանքների և որոշումների մասին: Նա, քննութեան առաւ որոշումներ տւեց օրւայ բոլոր հրատապ հարցերի մասին: Նա, կարելի է ասել, սպառիչ ամբողջութեամբ արտայայտեց այն ապրումները, որ այն օրերին ունէր ուռսահայ ժողովուրդը: Եթէ ներկայացուցիչ համագումարի և ծիսական կողմը — ողջոյնի հեռակրները ուրիշ ժողովուրդների և կազմակերպութիւնների կողմից, ժողովրդական համակրական ցոյցերը ևն. — պատկերը կը լինէր տպաւորիչ:

Համագումարը վերջացաւ Գործադիր Մարմնի կազմութեամբ, որը ստացաւ Հայոց Ազգային Խորհուրդ անունը և որին վիճակեց չափից

աւելի ծանր ու պատասխանատու դեր կատարել: Հայոց Ազգ. Խորհուրդի պատմութիւնը առանձին նիւթ է և արժէ, որ գրւէր, որովհետեւ այդպիսով ներկայացւած կը լինէր Հայոց նորագոյն պատմութեան ամենայնպէս անբաժնի մի դրւագը: Նրա օրով սաղմնաւորեց և միս ու արիւն ստացաւ Հայաստանը, իբրև ազգային-հողային մի միաւոր, իբրև միջազգային քաղաքական երեւոյթ, իբրև մի փաստ, որ յետագայ ամենադժան փորձութիւնները, անգամ բոլշեւիկեան մահաշունչ խորշակը չկարողացան վերացնել աշխարհի երեսից:

Ս. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ-ՂԱՐԱՔԻԼԻՍԱ

Հայոց աշխարհը հրդեհի մէջ էր: Կարսն ու Ալեքսանդրապոլը անցած էին տաճիկների ձեռքը: Ղարաբաղն ու Ձանդեղուրը՝ կտրւած Երեւանից: Հայկական դաւաճաններում խռնւած էր բազմահազար զաղթականութիւնը: Սով, հիւանդութիւններ, թաթարական հորդանների անվերջ յարձակումներ: Ի՞նչ էր կատարւում դուրսը, արտաքին աշխարհում — յայտնի չէր: Հայաստանը բառի բովանդակ առումով կտրւած էր ամբողջ աշխարհից...

Այս էր Հայաստանի դրութիւնը 1918 թ. Մայիսին, երբ Բաթումի անպտուղ բանակցութիւններից ձանձրացած՝ տաճիկները խախտեցին զինադադարը և երեք ուղղութեամբ անցան յարձակման՝ դէպի Ղարաբաղիսա, դէպի Արագած և դէպի Սարղարապատ: Նրանց ծրագիրն էր, վճռական մի գրոհով, բանալ Ղարաբաղիսա-Դիլիջան-Ղաղախ և Երեւան-Դիլիջան-Ղաղախ ճանապարհները արագօրէն հասնելու համար Աղբէջանի օգնութեան՝ Բագուին տիրանալու նպատակով:

Սարսափելի էր դրութիւնը Երեւանում: Ազգային Խորհուրդը Արամի գլխավորութեամբ յուսահատական ճիգեր էր թափում երկրի պաշտպանութիւնը կազմակերպելու համար: Հեշտ գործ չէր այդ: Ամէն ինչ քայքայւած էր. ո՛չ անհրաժեշտ չափով ռազմավարներ կար, ո՛չ պարէն, ո՛չ կանոնաւոր բանակ: Կար միայն անյողողղ կամք և զիմադրելու անհուն վճռականութիւն: Այդ պողպատէ կամքի մարմնացումն էր Արամը իր գործակիցներով — Դրօ, զօր. Սիլիկեան, զօր. Փիրումեան և ուրիշ շատերը: Նրանց յաջողեց ո՛չ միայն Երեւանում ծայր տւած խուճապը կանգնեցնել,

այլ և ոտքի հանել ամբողջ ժողովուրդը, լարել ճակատի ու թիկունքի գործը և թշնամուն տալ հերոսական ճակատամարտներ:

Փութով դասաւորւում են հայկական ուժերը, որոնց ընդհանուր հրամանատար է նշանակւում զօր. Սիլիկեանը. Բաշ-Աբարանի ճակատի պաշտպանութիւնը յանձնւում է Դրօին, Սարղարապատի ճակատը՝ զօր. Փիրումեանին: Կազմակերպւում է թիկունքի և պարենաւորման գործը:

Մայիս 24-ին զօր. Սիլիկեանը մի սրտառուչ կոչ է ուղղւում ժողովրդին. «Հայեր, գրում է ձերունի զօրավարը, շտապեցէք հայրենիքն ազատելու: Հասել է ըստէն, երբ իւրաքանչիւր Հայ՝ մոռնալով իր անձնականը, յանուն Մեծ Գործի՝ հայրենիքի փրկութեան և իր կնոջ ու աղջիկների պատւի պաշտպանութեան համար պիտի գործ դնի իր վերջին ճիւղը, թշնամուն հարւածելու:

Մենք չէինք ուղում կուել, յանուն խաղաղութեան և հաշտութեան պատրաստ էինք մենք ընդառաջ գնալու ամէն տեսակ զոհողութիւնների, սակայն մեր Լուսինայի թշնամին ընթանում է իր ծրագրած ուղիով. նա ըստ երեւոյթին ստրկացնել է ուղում մեզ, բայց իրօք ուղում է ոչնչացնել մեր բազմաչարքար ազգը: Եւ քանի որ պիտի ոչնչանանք, աւելի լաւ չէ, որ վէճը ձեռներիս փորձենք մենք մեզ պաշտպանելու: Գուցէ յաջողւում է մեզ կուով ձեռք բերել ապրելու իրաւունքը:

«... Հայեր, ժամանակը չէ դանդաղելու: Բոլոր մինչև 50 տարեկան հասակ ունեցողները պարտաւոր են զէնքի տակ գալու. ես պահանջում եմ բոլորից ներկայանալ իրենց զէնքերով ու փամփուշտներով հայրենիքի պաշտպանութեան համար:

«Հայուհիներ, յիշեցէք հինգերորդ դարու փափկասուն տիկնանց, որոնք ողբերեցին իրենց ամուսիններին դէպի Մեծ Գործը, անմահ Վարդանի կուիւների ժամանակ, հետեւեցէք նրանց օրինակին. եթէ չէք ուղում, որ ձեր պատիւը ոտնակոխ լինի, խրախուսեցէք նրանց և արհամարհեցէք այն վախկոտները, որոնք զանազան պատրւակներով խուսափում են ճակատ գնալուց: Հաւաքեցէք նրանց համար ռազմավարներ, հաց, շոր և ուրիշ մթերք:

«Խորին կերպով համոզւած եմ, որ իմ այս կոչը անարձագանգ չի մնայ և երկու-երեք օրւայ ընթացքում կը կազմակերպւի մի այնպիսի քաջարի զօրաբանակ, որին կը յաջողւի վճռաւ թշնամուն հայրենի հողի սահմաններից և ապահովել հայ ժողովրդի գոյութիւնը: Յանուն բազմաչարքար հայ ժողովրդի ֆիզիքական գոյութեան, յանուն ոտնակոխ եղած ճշմարտութեան ոտքի կանգնեցէք: Դէպի գործ, դէպի սրբազան պատերազմ»:

Եւ Սիրիկեանի կողմ անարձագանդ չէ մնում: Իրօք որ “երկու-երեք օրւայ ընթացքում” կազմակերպուում է “քաջարի բանակ”, և սկսում են արիւնահեղ կռիւները: Տաճիկները յանկարծակիի են գալիս. նրանք չէին սպասում այդպիսի դիմադրութեան: Ամէն կողմ, ուր տաճիկ սահե-բները փորձում էին յառաջխաղացման դիմել, իրենց դէմ ծուռանում են Հայերը: Առանձնապէս բուռն են լինում ճակատամարտները Սարդարապատի և Բաղ-Աբարանի տակ: Դրօն ջարդում և փախուստի է մատնում Ալա-գեազի բարձունքները մաբլցող թշնամուն: Զօր. Փիրումեանը ջախջախիչ հարած է տալիս Սարդարապատի շրջանի տաճիկ ուժերին: Հայկական սպայակոյտը հաղորդում է Մայիսի 28 ին. “Այսօր երեկոյեան ժամը 8 40-ին, անհաւասար կռուում, հերոսաբար ընկաւ մեր հին հայրուկներից Զէմկեակը: Թիւրքերը երեքօրեայ կռիւներից յետոյ ջարդած են և նա-հանջում են հապճեպով: Նրանց զօրամասերը բաժանւած են երեք խմբի: Առաջինը՝ Ալագեազի կայարանից նահանջում է դէպի Անի կայարանը, երկրորդը՝ Կրմիլու և երրորդը՝ Ախջա-Կալա: Մեր զօրամասերը քայլ առ քայլ հետապնդում են նրանց: Ոգեւորութիւնը աներեւակայելի է: Ապա քիչ յետոյ. “Յայտնում ենք, որ մերոնք գրաւել են Ալագեազ կայարանը և շարժում են դէպի Անի”: Եւ յետոյ. “Բաղ-Աբարանի ուղղութեամբ երէկ մեր զօրամասերը դիմեցին յարձակման և թշնամուն իր դիրքերից դուրս քշեցին: Մերոնք հետապնդում են նահանջող թշնամուն”: Իսկ Մայիսի 29-ին զօր. Սիրիկեանը իր կոչով յայտնում է, որ “Մեր քաջարի զօրքերի հերոսական գործունէութիւնը շարունակուում է, տաճիկ զօրքերը նահանջում են: Մենք պէտք է յետ վերցնենք Ալեքսանդրապօլը, որը այնպէս նենգօրէն գրաւեցին տաճիկները:” Տաճիկները ահագին կորուստ-ներ տալով բոլոր ճակատներում դիմեցին նահանջի: Խուճապ է առաջ գալիս և Ալեքսանդրապօլում, ուր հայկական յաղթանակները ահագին տպաւորութիւն են առաջ բերում: Հայ զօրքերը տենդագին պատրաստուում են թշնամուն հալածելու և գրաւելու Ալեքսանդրապօլը. “ապա միայն բանակցութեան մէջ մտնենք տաճիկների հետ խաղաղութիւն կնքելու” — յայտարարում է զօր. Սիրիկեանը...

Այդ նոյն օրերին — Մայիսի 25-27 — արիւնոտ կռիւներ տեղի ունեցան Ղարաքիլիսայի շրջանում: Տաճիկները, Ալեքսանդրապօլը գրաւելուց յետոյ, յառաջացան մինչև Ղարաքիլիսա: Հայ ժողովուրդն ու զօրքը բարոյալքած ու յուսաբեկ՝ անկարգ և խռնած սկսեցին նահանջել մինչև Դիլիջան, ուր տեղափոխուեց և զօր. Նազարբէգեանը իր սպայակոյտով: Փախչող զօրքը, սակայն, շուտով ուշքի եկաւ և Մայիսի 25-ին անցաւ դիմադրութեան ու կանգնեցրեց թշնամու արշաւը: Հրամանատարութեան

յաջողեց հաւաքել ու կազմակերպել ցաք ու ցրիւ եղած ուժերը և ուղղել դէպի ճակատ: Եւ երեք օր շարունակ հայ զօրամասերը աննկուն դիմադրութիւն ցոյց տւին տաճիկներին: Այս ճակատամարտներում էր, որ Անդրանիկը կատարեց ճակատադրական դեր: Սպարապետ Նազարբէգեանը հրամայել էր նրան պաշտպանել ճակատի աջ թեւի բարձունքները, բայց Անդրանիկ հրամանը ստանալով կեղտոտ հայհոյանք է ուղղում Նազարբէգեանի հասցէին և հաւաքելով իր զօրամասը, առանց բարձր հրամա-նատարութեան իմաց տալու, շտապով անցնում է դէպի թիկունք և սկիզբը դնում իր համբուււտ արշաւանքին դէպի Խոյ: Անդրանիկի բացած ճակատամասով, աջ կողմից, առաջ են շարժուում տաճիկները և Մայիսի 27-ին սպառնում շրջապատել մերոնց: Գիշերւայ ժամի 2-ին մերոնք թողնում են իրենց ամուր դիրքերը և քաշուում դէպի յետ. Մայիսի 28-ին ընկնում է Ղարաքիլիսան...

Ահա այս կռիւներն էին, որ այնպէս բարձրացրին հայ զինուորի վարկը տաճիկների աչքին: Դրանից յետոյ էր, որ Վէհիբ փաշան Բաթումում հայ ներկայացուցիչներին առաջարկեց կնքել հայ-տաճիկական դիմակցութիւն: Սարդարապատի և Ղարաքիլիսայի ճակատամարտներն եղան պատճառ, որ տաճիկները դաշինք կնքեցին Հայերի հետ և ճանաչեցին Հայաստանի անկախութիւնը: Սարդարապատն ու Ղարաքիլիսան հանդիսացան այն կամուրջները որոնց վրայով հայ ժողովուրդը անցաւ դէպի ինքնուրոյն պետական կեանք: Արաքսի հովտում, Արագածի լանջե-րին և Փամբակ գետի եղբայրներին ընկած հայ մարտիկների արիւնը ապարդիւն չանցաւ. նա փրկեց Հայաստանը վերջնական ոչնչացումից, նա շաղխեց և ամրացրեց այն պատւանդանը, որի վրա կառուցեց Հայաստանի Հանրապետութիւնը:

Փնուք նրանց: Փնուք ընկածներին յանուն Ազատութեան:

**ՀԱՅՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ**

Ազգային Համագումարը փակելէ առաջ, 1917 թիւ հոկտեմբերին, ընտրեց Ազգային Խորհուրդ, որը պիտի հանդիսանար իր գործադիր մարմինը: Ազգային Խորհուրդը, սակայն, դէպքերու բերումով եղաւ ոչ թէ սոսկ գործադիր մարմին, այլ հայ ժողովրդի գերագոյն ղեկավարը, տեսակ մը ազգային կառավարութիւն: Աշխատանքները Ազգ. Խորհրդի մէջ բաժ-

նեցան նախարարական սկզբունքներով և ան գործեց իբեւ նախարարութիւն:

Ըստ ձեւի Ազգ. Խորհուրդը ենթակայ կը համարուէր միայն Ազգային ժողովին, բայց ըստ էութեան ամբողջապէս պատասխանատու էր ժողովրդական լայն դանդաճներու առաջ, որոնք կազմակերպուած էին կուսակցութիւններու մէջ: Տեսակ մը կուսակցութիւններու քօալիսիօն էր ան և ըստ ամենայնի կը գտնուէր կուսակցական հակակշռի տակ: Եւ ատիկա անբնական չափով համարուի, եթէ յիշենք անոր կազմութեան պարագաները: Կուսակցութեանց հակակշիւրը այնքան իրական էր, որ անոնք իրաւունք ունէին նոյն խակ իրենց մէկ ներկայացուցիչը փոխարինել ուրիշով:

Ազգային Խորհրդի կազմը հետեւեալն էր. Դաշակցականներ՝ Արամ, Ա. Ահարոնեան, Ռ. Տէր-Մինասեան, բժ. Ա. Բաբալեան, Խ. Կարճիկեան և Ն. Աղբալեան: Ժողովրդականներ՝ Ս. Յարութիւնեան, Մ. Պապաջանեան: Սօց.-յեղափոխականներ՝ Յ. Տէր-Օհանեան և Ա. Ստամբուլցեան: Սօց.-դէմօկրատներ՝ Ղ. Տէր-Ղաղարեան և Մ. Ղարաբէգեան, անկուսակցականներ՝ Ստ. Մամիկոնեան, Տ. Բէզդադեան և Պ. Զաքարեան: Հակառակ իր նման կազմին Ազգ. Խորհուրդը ամբողջական չգտապարտեցաւ և ունեցաւ աջքի զարնող գործունէութիւն, որովհետեւ դաշակցականներու վեց ձայնը գրեթէ միշտ իր հետ ունեցաւ անկուսակցականներու մեծամասնութիւնը (խորհրդի մէջ հարցերը կը վճռուէին պարզ մեծամասնութեամբ): Պէտք է աւելցնել և այն պարագան, որ սօց.-յեղափոխականներու, սօց.-դէմօկրատներու և ժողովրդականներու միջև գոյութիւն չունէր տեսակէտներու ներդաշակութիւն և անոնք դժարութեամբ կը միանային միմեանց: Դաշակցութիւնը լինելով, սակայն, պատասխանատու դեկավար ուժը, միշտ հաշտ կառնէր փոքրամասնութեան կարծիքները և շատ յաճախ իր տեսակէտները կը յարմարցնէր անոնց և այս հաշտարար ոգիի հետեւանքով Ազգ. Խորհրդի մէջ կը տիրէր համերաշխութիւն, թէև իր մեքենան, բնականաբար, կը դառնար աւելի դանդաղաշարժ և իր կամքը երբեմն՝ անվճռական: Իր որոշումներով ան կը մօտենար ամբողջ հայ ազգի մտայնութեան, բայց կը կորցնէր գործունէութեան արագութիւնը և իր հրահանգներու յստակութիւնը — պարագայ մը, որ, թերևս, մեծ թերութիւն չէ բնականօրէն օրերու համար, բայց անհամապատասխան տաղանապալի վայրկեաններուն, երբ կը պահանջուի կտրուկ և անմիջական վճիռ ու գործ:

Անդրկովկասեան Առանձին Կօմիտէն և ապա Սէյմը փաստօրէն կովկասեան երեք ժողովուրդներու՝ Հայերու, Վրացիներու և Թաթարներու ներկայացուցչութիւնն էին: Ըստ էութեան անոնք անկամ, անուժ և ան-

գործունէութեան մատուցած մարմիններ էին — հետեւանք այն բանի, որ անոնց բաղադրիչ երեք ազգութիւնները իրարու հանդէպ կը տածէին անվստահութիւն և տոգսուած էին տարբեր, հակամարտ ձգտումներով: Այսպէս, օրինակի համար, Հայերը կը ձգտէին Թուրքիոյ պարտութեան և կաշխատէին, որ Թուրքերը հեռու մնան Անդրկովկասի ու Տաճկահայաստանի սահմաններէն, մինչդեռ Թաթարները բուն կերպով կը տենչային հաշտութիւն կնքել Թուրքերու հետ և, նոյն իսկ, Թուրքերը բերել Կովկաս: Վրացիներն ալ կը վարէին իրենց ուրոյն քաղաքականութիւնը և կը ջանային Վրաստանն անկախ դարձնել Գերմանացիներու միջոցով, այն ինչ Հայերը իրենց ազատութիւնը կը փնտռէին Դաշակցիներու յաղթութեան մէջ: Այս տարամերժ ձգտումներն ունեցան և իրենց գործնական հետեւանքները. Անդրկով. Առանձին Կօմիտէի և Սէյմի կողքին առաջ եկան ազգային խորհուրդներ, որոնք իրենց հասկցած ձեւով կը կազմակերպէին իրենց ժողովուրդը և ուղղութիւն կուտային իրենց ազգային գործերուն, և կառավարական որոշումներէն ու հրահանգներէն կը գործադրուէին միայն անոնք, որոնք կը նկատուէին ազգային խորհուրդներու տեսակէտներուն համապատասխան: Այս հողի վրա երբեմն խուլ, երբեմն ալ բացայայտ պայքարներ տեղի կունենային Առանձին Կօմիտէի ու Սէյմի և Ազգային խորհուրդներու միջև:

Հակամարտութիւններու այս բովին մէջ կը գործէր և Հայոց Ազգային Խորհուրդը: Պարզ տեսնելով, որ վրացի-թաթարական բլթքը Անդրկովկասը կը տանի դեպի այնպիսի դրութիւն մը, երբ վտանգի կենթարկուի նոյն իսկ հայ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը, անիկա արագօրէն ամփոփեց իր ձեռքը հայ ժողովրդի բովանդակ գործերը և հայկական նահանգներու վարչութիւնը և սչ միայն ձակատի պաշտպանութեան համար սկսեց կազմել առանձին ուժեր, այլ և ստանձնեց թրքահայ գրաւած հողերու վաճական կազմակերպութիւնն ու կարգաւորումը, հայ ժողովրդի արտաքին քաղաքական դեկավարութիւնը, թէև անանապէս Ռուսաստանը դեռ կարձեւականօրէն գոյութիւն ունէր և անդրկովկասեան իշխանութիւնը: Այսպիսով, Հայոց Ազգային Խորհուրդը կարելի է համարել հայկական առաջին կառավարութիւնը, թէև ան միայն Մայիսի 28-ին ինքզինքը հռչակեց «գերագոյն իշխանութիւն հայկական դաւառներու»:

Այն, Ազգային Խորհուրդը հայկական առաջին կառավարութիւնն էր, բայց ոչ Հայաստանի: Հայաստանը կ'ապրէր իր ուրոյն կեանքով՝ համարեա կտրուած Թիֆլիսէն: Ազգ. Խորհուրդը դաւառներու մէջ կը ներկայանար իր ներկայացուցիչներու միջոցով, և ահա այդ ներկայացուցիչները՝ օծուած առաւել կամ նազ լիազօրութիւններով՝ կը կազմէին Թիֆլիսի Ազգային

Խորհրդի օրինակով տեղական ազգային խորհուրդներ, որոնց և կանցներ տեղական իշխանութիւնը: Տեղական խորհուրդներն ալ նոյն կազմը ունէին, ինչ որ և կեդրոնինը: Թէև գաւառներու մէջ դժարութեամբ կը ճարւէին Դաշնակցութենէ զատ ուրիշ կուսակցութիւններ, բայց և այնպէս ջանք կը թափւէր անոնց մէջ ներկայացնել բոլոր հոսանքները:

Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչն էր և Արամը, որ ղրկւեցաւ Երեւանի նահանգը բացարձակ լիազօրութիւններով: Ան կազմակերպեց Երեւանի Ազգ. Խորհուրդը, որուն վիճակեցաւ խիստ ծանր աշխատանք և պատմական մեծ դեր կատարել: Ռուսական զօրքերը քայքայւած՝ թիւ կունք կը նահանջէին, և հայկական գաւառները կը դաժնէին թրքական ներխուժման և թաթարական յարձակումներու վտանգին հանդէպ: Հայկական շրջանները մատնւած էին քասսի ու քաղաքացիական կռիւներու: Այս կրակ ու բոցի մէջ էր, որ Երեւանի Ազգ. Խորհուրդը, Արամի մասնակցութեամբ, անցաւ գործի և դարձաւ ղեկավար կեդրոնը հայկական գաւառներու ինքնապաշտպանութեան, տնօրէնը անոնց բազմի ու գործի: Արամ իր հոժովու կորովով իր շուրջը համախմբեց բոլոր գործօն ուժերը, և որպէսզի կարելի ըլլայ երեւան հանել արագ ու վճռական գործունէութիւն, Երեւանի Ազգ. Խորհուրդը ընդառաջ գնալով ընդհանուրի ցանկութեան, անոր տւաւ տիքթաթօրական իրաւունքեր և անոր ձեռքն ամփոփեց շրջանի բովանդակ իշխանութիւնը: Ժողովուրդը խանդավառութեամբ ընդունեց Արամի տիքթաթօր հռչակելը: Արամը շնորհիւ իր արտակարգ թաքթի կրցաւ օգտագործել և Ազգ. Խորհուրդը, և Երեւանի մտաւորականութիւնն ու կուսակցութիւնները, և ղինւորականութիւնը և կարճ ժամանակի մէջ կազմակերպել պատկառելի ղինւորական ուժ: Արամի տիքթաթօրութեան և Ազգ. Խորհրդի ճիգերուն արդիւնքն եղան Սարգարապատի և Բաշ-Աբարանի հերոսական ճակատամարտերը, որոնք կանգնեցուցին թրքական արշաւը և ղիւրացուցին Բաթումի դաշնադրին կնքումը: Երեւանի Ազգ. Խորհուրդն ու Արամը եղան փաստօրէն Հայաստանի առաջին կառավարութիւնը, և երբ Հայոց Ազգ. Խորհրդի նշանակած կառավարութիւնը Թիֆլիսէն հասաւ Երեւան, Հայաստանի իշխանութիւնն արդէն կազմւած էր և կը գործէր Արամի ղեկավարութեան տակ,

Երբ 1918 թ. Մայիսի 28-ին, Անդրկովկասի Միութեան քայքայման հետեւանքով, Հայոց Ազգ. Խորհուրդը ստանձնեց “Հայկական գաւառներու զերագոյն իշխանութիւնը”, անոր առջև ղրկեցաւ գործնական խնդիր մը. կամ վաւերացնել Երեւանի մէջ գոյութիւն ունեցող փաստական կառավարութիւնը, կամ տեղափոխել Երեւան: Ան ընտրեց վերջինը, մասնաւանդ որ Երեւանի Ազգ. Խորհրդի և Արամի փափաքն ալ այդ էր, և

Յունիսի 10-ին յանձնարարեց Յ. Քաջաղունիին կազմել Հայաստանի առաջին նախարարութիւնը: Մօտ ամիս ու կէս յետոյ ինքն ալ, անդամներու հիմնական փոփոխութեամբ, մեկնեցաւ Թիֆլիսէն և Յունիսի 23-ին հասաւ Երեւան, ուր ընդունեցաւ երկրի բարձրագոյն իշխանութեանը վայել պատիւներով: Կառավարութեան գալով, Երեւանի Ազգ. Խորհուրդը լուծեցաւ, բայց Արամ նորաստեղծ իշխանութեան մէջ ալ մնաց ծանրութեան կեդրոնը, իբրև ներքին Գործոց, Հանրային Կրթութեան, Խնամատարութեան, Պարենաւորման և Հաղորդակցութեանց միջոցներու նախարար:

ՌՌՌՌՌ



## Մ Ա Յ Ի Ս Ի 28-Ը

Վերջին տասնամեակին մեր ժողովրդի ապրած պատմական օրերի մէջ 1918 թ. Մայիսի 20-ից 28ը կը մնան որպէս դարազուլս արիւնոտ փորձութիւնների և ծագող յոյսերի:

Թւում է թէ այս պատերազմի սկզբից, 1914 թ. վերջերից, մեր ժողովրդի ապրած թշուառութիւնների և յոյսերի իրար յաջորդող շարանը սղմել ու թանձրացել էր մէկ կողմից Երեւանի տակ, հինաւորաց Արաքսի ափերին, աչեզարդ Մասիսի ու Արագածի փէշերին և միւս կողմից Գուգարաց աշխարհի մթին, անտառապատ ձորերում:

Ջորս տարիների անընդհատ մարտնչումները Եվրատի ափերից մինչև Արաքս ու Հրազդան, մեղ թողել էին միայն բանակի երկու փշրանքներ՝ մէկը Երեւանի տակ և միւսը՝ Ղարաքիլիսա: Եւ նոյն այդ աղէտաւոր տարիները ճարակելով մեր ժողովուրդը Վասպուրականից ու Բարձր-Հայքից մինչև Այրարատեան դաշտ, զէպի Երեւան և ղէպի Ղարաքիլիսա էին շարտել Մեծ Եղեռնից ճողոպրած ղաղթականութեան ալեծուփ, չառական բեկորները: Բազմահազար այդ չարաբաստիկ բազմութիւնը իր ցաւերն ու դաւակները շարակած՝ քայլ առ քայլ ընթանում էր նահանջող բանակների հետ ապաստանի վայր ու հանդիստ փնտրելով:

Հորիզոնները փոխւում էին անդադար — և բազմը նոյնն էր — անընդհատ կռիւ, ապա նահանջ ղէպի նոր լեռներ ու նոր ձորեր: Մեծ

պատերազմի տարեգրութեան մէջ չկայ և ոչ մի ազգ, որին վիճակած լի՛ էր կռիւների այս աստիճան համերական յեղյեղումներ, ուր զօրք ու խուճապող ժողովուրդ անագորոյն թշնամու առջեւ շարունակ իրար են հիւսած բաղեղների պէս, և ուր զինուորը ամեն մի զնդակ արձակելիս նախ շուրջն է նայում իր հարազատները փնտրելով:

Այսքան ողբերգական պայմաններում ընթացաւ մեր ազատամարտը, և այսպէս էլ հասաւ նա մէկ կողմից Ղարաքելիսա, և միւս կողմից՝ Երեւան: Եւ ահա այստեղ, Դէքէղի և Արաքսի ափերին, հայ ժողովրդի անձնագոհ զաւակները իրենց վերջին կաթիլ արիւնը թափեցին հայրենիքի վերջին կտոր հողը պաշտպանելու և ցեղի մնացորդը փրկելու անողորմ ու տմարդի թշնամուց:

Երկու ձակատամարտերը — Սարղարաբատի և Ղարաքելիսայի — իրար արժանի են թէ իրենց հերոսական շնչով, թէ ինքնաբուռն ու ինքնակամ թափով և թէ շրջապատող պայմանների դժնդակ դասաւորութեամբ:

Ռազմավթերքի և ուտեստի պակաս, բազմահազար դաղթականութեան թշուառութիւն, հարեւանների թշնամութիւն և յետոյ՝ մարտիկների հոգիների մէջ անհուն դառնութիւն ապրած անտեսիլ անիրաւութիւններից ու չարիքներից:

Էրզրումը խլել էր նրանցից բօլշեւիկ Ռուսիոյ աննախընթաց յեղափոխութիւնը. Կարսը՝ Հայոց աշխարհի բրօնզէ դուռը, բացել էր թշնամու առաջ մեր հարեւանների կարծամիտ, յանցաւոր ու ինքնասպան թրքասիրութիւնը. Ալէքսանդրապօլը զոհ էր գնացել թիւրքական նենգութեան:

Դրսից օգնութեան ո՛չ մի յոյս. թշնամին՝ յամառ ու վայրագ օրհասական պայքարի ժամն էր հնչել մեր արիւնաքամ ու պարտասւած բանակի համար:

Եւ այդ պայքարը նա ընդունեց մի վճռականութեամբ ու արիւնութեամբ, որ յիշեցնում էր հերոսական դարերը մեր ալեծուփ պատմութեան:

Եւ մեր հինաւուրց ու արիւնարբու թշնամու դէմ բաղիւումը զարհուրելի եղաւ, գրեթէ միաժամանակ թէ Սարղարաբատում և թէ մանաւանդ Ղարաքելիսայում:

Սարղարաբատում մերոնք յաղթեցին երեք օրուայ (Մայիս 26, 22, 23-ին) ահեղ ձակատամարտներում շնորհիւ Արամի երկաթէ կամքին, և իր քաջարի ընկերակիցների՝ զօր. Սիլվիկեանի, Փիլոսմեանի և անպարտելի Դրօի:

Ղարաքելիսայում, նոյնքան դժւարին պայմաններում, ծերունի

հրամանատար զօր. Նազարբէգեանի կոչը մի օրում տասն հազար մարտիկ համախմբեց թիւրքական 20 հազարանոց բանակի դէմ: Եւ չորս օր տեւող (Մայիս 23-24-25-26) ահեղ ձակատամարտի մէջ հակառակորդներից իւրաքանչիւրը զիմացինին ոչնչացնելու զարհուրելի վճռականութեամբ ինքզինքն էր փշրել կատաղօրէն: Չորս հազար հայ մատաղ կեանքեր փուռեցին Գուգարաց ձորերում և կրկնակի աւելի թիւրք ղիակներ: Պարտող և յաղթող չկար — ինչպէս մեր անմահ Եղիշէն կ'ասէր. «Երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան»:

Յիշատակենք անցողակի այդ օրերում մեր հարեւանների մտայնութիւնը: Մինչ Գուգարաց լեռները դղրղում էին թնդանօթների որոտով և հրացանների ճարձատիւններով, ճիշդ այդ օրը՝ Մայիսի 26-ին, երբ մեր երիտասարդութեան ծաղիկը Ղարաքելիսայի ձորերում մահու և կեանքի արիւնոտ պայքարի մէջ էր թիւրքերի դէմ և ընկնում էր հազարներով, մեր երկու հարեւանները, թաթար ու վրացի, ցրում էին Կովկասեան մէջ, փշրում Կովկասի Միութիւնը և իրենց անկախութիւնը հռչակում:

Քաղաքական տհասութեան մի ծանր ու անջնջելի փաստ է վրաց ժողովրդի վարիչներից Ի. Մերեթելի արտասանած ճառը Մայիսի 26-ին, վրաց անկախութեան հռչակումի հանդէսին.

«Վրաց ժողովուրդը մնացել է մենակ, ասաց Մերեթելին. նրանից անջատուել են Հայերը և կամովին՝ թաթարները, Անդրկովկասի կեղծ անկախութիւնը խանգարում է նրան ազատօրէն վարել և գործադրել լիազօր ուժերը իր անկախութիւնը պաշտպանելու...»

Այս անհունօրէն անիրաւ խօսքերը կարողացաւ արտասանել սոցիալ-դեմօկրատ Մերեթելին 1918 թիւ Մայիսի 26-ին, երբ հայ ժողովուրդն էր մնացել մենակ և երբ վրացիներն էին անջատուել նրանից և ինչ եղբրական պարագաներում:

Եւ ահա ութ տարի յետոյ այս ողբերգական անցքերից, տրամուլթեամբ եմ խորհում, որ վրացի առաջնորդների այս արտասուելի քաղաքական կուրութիւնը՝ հասցրեց վրաստանը այն վիճին, որի մէջ նա Հասսանի հետ թրսրտում է կարմիր բռնութեան ձիրաններում: Վրաց ընդգրկած, քաղաքականութիւնը և՛ մեր, և՛ վրաստանի կործանման բուն պատճառն է:

\*  
\* \*

Սարղարաբատի և Ղարաքելիսայի արիւնահեղ ձակատամարտերն էին, որոնք անկախ Հայաստանի Հանրապետութեան հիմքերը ձգեցին հայ ժողովրդի արգար արիւնով:

Արդարեւ, առանց մեր ցեղական կորովի, ապրելու և ազատ ապրելու սպառնալի վճռականութեան Ստամբուլի ջարդարարները երբեք չպիտի հանդուրժէին ու է ազատ ու անկախ հայ հողամաս, թէկուզ միմիայն Սեւանայ լճի ափերին:

Պանթուրանական մի խելայեղ ծրագրով, որ Երևո. Թիւրքերի խելապատակի ճնունդ է, և որ այսօր իսկ վառում է «դադի» Քէմալի հրեակայութիւնը — Թիւրքերն այդ ժամանակ շտապում էին դէպի Ադրբեյջան, դէպի Բագու ճամբայ բանալու համար Միջին Ասիա:

Այս նպատակն իրագործելու համար նրանք պէտք ունէին թիւուցի խաղաղութեան: Նրանք տեսան, սակայն, որ Սարդարաբատի ու Ղարաքիլիսայի ճակատամարտերը վարող ժողովուրդը այդ խաղաղութիւնը չի տալ նրանց: Թիւրք հրամանատարը ապշել էր. նա չէր սպասում այս աստիճան յամառ ու յանդուգն դիմադրութեան: Հայ ժողովուրդը այդ կռիւներով դարձաւ նրանց համար շատ աւելի վտանգաւոր, քան նրանք կարծել էին: Թիւրք հրամանատարութիւնը լաւ ըմբռնեց, որ իր առաջ-խաղացումն անհնարին է, առանց Հայերի հետ որոշ համաձայնութեան գալու: Նրա համար պարզ էր այնուհետեւ, որ անգամ ցրւած բանակն ու գաղազւած ժողովուրդը, պարտիզանական կռիւներով կարող են անդարմանելի չարիքներ հասցնել թշնամուն և կասեցնել ամենաուժեղ բանակի զինուորական ծրագիրները:

Եւ Ղարաքիլիսայի ու Սարդարաբատի անօրինակ կռիւները վարող ժողովուրդը անշուշտ պիտի բռնէր պարտիզանական վրիժառու ոգորումները ձամբան:

Եւ թիւրք բանակի թիկունքն ազահոյելու հոգսն էր միայն, որ ստիպեց Սղամբուլի մարդասպաններին զիջումների ճամբան բռնել գէթ նւազագոյն գոհացումն տալ Հայերին և անկախութեան պատրանք ստեղծել մեր ժողովրդի համար ու շտապել դէպի Բագու:

Եւ շարաթներով մոռացւած Բաթումի բանակցութիւնները, յանկարծ, կենդանացան Սարդարաբատից ու Ղարաքիլիսայից յետոյ և շտապով համաձայնագիրը ստորագրեց:

Մեզ համար զարհուրելի էր այդ դաշնագիրը. նա խորտակում էր մեր բոլոր ազգային-քաղաքական ծրագրերը, ի դերեւ էր հանում հայ ժողովրդի այնքան զոհաբերութիւնները, դամոկլեան սրի պէս մեր գլխին էր կախում թրջական եսթաղանը և միաժամանակ մեզ թուլացնում, ստորացնում ու ձեռք սռք կապած՝ մատնում մեր հարեւանների քմահաճոյքներին:

Այդ դաշնագիրը, այնուամենայնիւ, լիովին չէր գոհացնում նաև՝

Թիւրքերին, որոնք յետագային երբ կարողանային վերջնականապէս հաստատել Կովկասում իրենց տիրապետութիւնը, որին շտապում էին, առաջին առթիւ իսկ պիտի փոփոխէին կամ իսպառ ջնջէին այդ համաձայնութիւնն ի վնաս մեզ:

Բաթումի համաձայնութիւնը երկու կողմերի համար էլ դաշնագիր անւան տակ՝ լոկ լուռ զինագաղար էր: Եւ երկու կողմերն էլ սպասում էին պատերազմի վախճանին. Հայերը՝ Դաշնակիցների յաղթութեան աչք անկաճ և Թիւրքերը՝ իրենց Միջին-ասիական ցնորական արկածի յաջողութեանը:

Եւ ահա իրերի այս արտառոց, խելայեղ կացութեան մէջ, Ազգային Խորհուրդը և Հ. Յ. Դաշնակցութիւնը միաբան, վճռեցին « faire bonne mine au mauvais jeu » և հռչակել Հայաստանի անկախութիւնը ընդամենը 11,000 քառ. կիլոմետր տարածութիւն հողերի վրա, որոնք տարածում էին Երեւանից մինչեւ Սեւանայ լիճը:

Մենք կորցրել էինք թիւրքաց Հայաստանից յետոյ՝ ոչ միայն Կարսն ու Արտասանը, այլ և Սուրմալուն, Նախիջեւանը, Էջմիածնի ու Ալեքսանդրապոլի, Երեւանի գաւառների մի խոշոր մասը. Ադրբեյջանն էլ հիւս-արեւելքից էր քաջբռնում մեր հայրենիքի պատառները և Վրաստանը՝ հիւսիսից: Ղարաբաղը, Զանգեզուրը, Դարալագեազը և Բասարգէչաբը Թաթարն էր պահանջում ու Լօռիէն մինչեւ Ղարաքիլիսա՝ Վրացին:

Եւ այնուամենայնիւ Հայոց Ազգային Խորհուրդը հռչակեց Հայաստանի անկախութիւնը հետեւեալ յայտարարութեամբ:

Անդրկովկասեան քաղաքական ամբողջութեան լուծումով եւ Վրաստանի ու Ադրբեյջանի անկախութեան հռչակումով ստեղծուած նոր դուրսեան հանդէպ՝ Հայոց Ազգային Խորհուրդը իրեն յայտարարում է հայկական գաւառների գերագոյն եւ միակ իշխանութիւն: Որոշ ծանցակցիւ պատահանեալ քողկելով մօտիկ օրերում կազմել Հայոց ազգային կառավարութիւն՝ Ազգային Խորհուրդը ժամանակաւորապէս ստանձնում է կառավարական բոլոր գումարեցիւցները հայկական գաւառների քաղաքական եւ վարչական դեպք վարելու համար:

Ստորագրւած՝ ՀՍ.Յ.Ս. Բ. Կ. Խ. Կ. Կ. Կ.

Եւ այսպէս, Մայիս 28-ին ազատ և անկախ Հայաստանի Հանրապետութեան հիմքը դրւեց:

Այն ժամանակից անցել է ահա ութ տարի: Եւ այժմ անդրադառնալով այդ պատմական մեծ ակտը շրջապատող պայմաններին, անհնարին է չխոստովանել, որ Մայիս 28-ը դարբնողներն և հայ ժողովուրդը պատ-

մական մոմենտի շատ ձիջտ և շատ յստակ ըմբռնումի հետ և ահտզին քաղաքացիական արիութիւնն են ունեցել: Նրանք կարողացան պարտութիւնն ընդունել և անկարագրելի թշուա օրերում հոգիների ղզաստութիւնն ու հաւասարակշուութիւնը չկորցնել: Մարտիրոսութեան հասնող մի ձիգ էր այդ պայմաններում հայ ժողովրդի դժխեմ բախտի պատասխանատուութիւնն ու ղեկավարութիւնը ճատուած հայրենիքի մի խղճակ բեկորի վրա հաստատել ու ամրապնդել: Եւ հայ ժողովուրդը մեծ եղաւ այդ վիթխարի ձախողանքի օրերին, հոգին կսկիծով լեցուն, մարմինը խողտանգւած, նա ատամները սղմեց, արցունքը կուլ տւեց և պարտածի իր ձախտագիրն ընդունեց տրամաշուք վեհութեամբ:

Պարտութեան մատնելը թշուաութիւն է, պարտութիւնը ղիտակցօրէն և ղզաստօրէն կրելը մեծ յաղթութիւն: Եւ այն տարականոն, դժխեմ պայմաններում Հայաստանի Հանրապետութեան հիմքը ձգելով՝ հայ ժողովուրդը յաղթեց իր դաժան բախտին, և թեւակոխեց քաղաքական իմաստութեան բարձունքները: Յեղական առաքինութեան ու մեծութեան առջեւ ինչ եղկելի, ինչ ճղճիմ ու փոքրօգի եղան արտասահմանեան հայութեան որոշ խաւերը քինտ ու աղաւեր կանչուողներով, որոնք, աւանդ, դեռ չեն դադարել: Պարտութեան, ձախողանքի օրերին սեփական կուրճքն բղկտող աղբը իր ապագայի յոյսերն է փետտում: Ժողովուրդների կենսունակութիւնն ու մեծութիւնը ոչ միայն յաղթանակի և փառքի օրերում պիտի երեւայ, այլ նրանցից աւելի տառապանքի ու թշուաութեան օրերում:

\*  
\*\*

Մայիս 28-ից յետոյ հայ ժողովրդին վիճակւած էր ցեղական դաւաւոր Յոյսի փթթումը տեսնել, ինչպէս և միջաւանջային օրեր ապրել: Միացեալ և Անկախ Հայաստանի վարդապոյս արշալոյսին և Սեւրի հմայիչ ու խոստմնալի դաշնագրին յաջօրոց ուս խորհրդային և քեմալական արշաւանքը և Կարսի անարգ ու հայակործան դաշնագիրը: Անգօրան ու կարմիր Մոսկւան ձեռք-ձեռքի տւած՝ պատուեցին Միացեալ և Անկախ Հայաստանը սրբագործող հայ ազգի charte-ը՝ Սեւրի դաշնագիրը՝ և հայ ժողովրդին ղարտեցին վերստին դէպի 1917-1918 թւերի եղեռնաշատ օրերը: Փաստօրէն բօլշեւիկ Ռուսիան և մեր ցեղին արիւնը ձծող Թիւրքիան իրար մէջ բաժանեցին մեր հայրենի աշխարհը, 1920 թւի նոյեմբերի 29-ի անիճակուռ օրը:

Կատարեց պատմութեան մէջ չտեսնւած ոճիրը: Հինգ դար անլուր բռնութեան ղլթաների մէջ յուսացող և կէս դար իր ազատութեան համար

հերոսաբար մարտնչող ցեղը վերստին ընկաւ նենգ բռնաւորների լծի տակ: Դեռ անցեալները Յրանսիայի վարչապետ պ. Հերիօ կարողանում էր պարլամենտի ամբիոնից բացականչել. «Հայաստանի գերեզմանի վրա երկու տապանաքարեր կան», այսինքն՝ սովետական և թիւրքական...»

Հերիօն Հ. Յ. Դաշնակցութեան անդամ չէ...: Եւ անգամ պարլամենտի կոմունենտ անդամներից մէկը, թէև լուռ անցնելով սովետական տապանաքարի առջեւից՝ ի նպաստ Հայաստանի արդարութեան և իրաւունքի խօսքեր արտասանեց թիւրքական բարբարոսութեան դէմ:

Թիւրքի և ուստական սովետի փորած գերեզմանում թաղածը, սակայն, սովորական մեռել չէ: Ղաղարոսն է նա, որի չորեքօրեայ թաղումից յետոյ՝ յարութիւնը մօտ է, ղատ մօտ: Մեր թշնամիների կրկնակ տապանաքարն իսկ անկարող պիտի լինի նրան խեղդել: Նա կը պատուի իր պատանը: Մեծ-Ոճիրի պատիժը միշտ իր մէջ է, և մեր հայրենիքն ու ազատութիւնը փողոտողները ղարհուրելի հատուցումն ունին պատմութեան ահաւոր նեմեզիդայից: Նրա ոտնաձայնը լսուում է արդէն...

Միացեալ և Անկախ Հայաստանը անդաւնալի երազ չէ...

Համբերութիւն, իմ Ազգ:  
Համբերութիւն և Հաւատ...

Ս. Ա. ԱՐՈՆՅԱՆ

## Բաթումի դաւնագիրը

(1918 թ. 4 Յունիսի)

Բաթումի դաշնագիրը, որ 1918 թ. յունիսի 4-ին ստորագրեց Հայաստանի Հանրապետութեան և Թիւրքիայի միջեւ, ունի ահագին պատմական նշանակութիւն: Նախ՝ նա, ժամանակագրական տեսակէտից, առաջին դաշնագիրն է, որ ստորագրել է Հայաստանը, իբրեւ անկախ պետութիւն: Երկրորդ՝ նա առաջին միջազգային վաւերաթուղթն է, որով Թիւրքիան — հայ ժողովրդի այդ անհաշտ թշնամին — ճանաչեց իրաւական գոյութիւնը Հայ ժողովրդի պետութեան և ճանաչեց ուրիշ որեւէ պետութիւնից առաջ: Այդ հայկական պետութեան և ճանաչեց ուրիշ որեւէ պետութիւնից առաջ: Հաղաշնագիրը վերջ տւեց հայ-թրքական առաջին պատերազմին, որը Հայաստանը ժառանգութիւն էր ստացել Անդրկովկասեան քայքայւած Հան-

րապետութիւնից: Բաթումի դաշնագրի ստորագրութեան պարագաները հասկանալու համար անհրաժեշտ է ձգել մի կարճ յետադարձ հայեացք (\*):

1917 թ. հոկտ. 25-ի բոլշևիկեան յեղաշրջումից լետոյ, Կովկասը, որ գտնուում էր հակաբալչեւիկեան ճակատում, փաստօրէն կտրւեց Ռուսաստանից, և առաջ եկաւ պատերազմը սեփական ուժերով վերջացնելու հարցը: Նախնական բանակցութիւններէն յետոյ Թիւրքերի հետ կնքւեց զինադադար, և Տրապիզոն մեկնեց մի պատուիրակութիւն հաշտութեան դաշնագիր ստորագրելու նպատակով: Սակայն, բանակցութիւնները դրական արդիւնք չտւին. Թիւրքերը պայման էին դնում ճանաչել Բրէստ-Լիտովսկի դաշնագիրը. Անդրկովկասեան պատուիրակութիւնը չէր համաձայնուում, ի վերջոյ յետ կանչւեց Թիֆլիս, և պատերազմը վերսկսեց Թիւրքերի և Կովկասի միջեւ:

Մարտի 31-ին, գրեթէ առանց դիմադրութեան, ընկաւ Բաթումը: Ապր. 9-ին Անդրկովկասը պաշտօնապէս յայտարարեց իրեն անկախ: Ապր. 11-ին Կարսը յանձնւեց Թիւրքերին: Անդրկովկասում ստեղծուում էր չափից աւելի ծանր դրութիւն: Մի կողմից Թիւրքերն էին առաջ շարժուում — Բաթումից դէպի Թիֆլիս և Կարսից ու Ալեքսանդրապոլից դէպի Բագու — որ առաջ էր բերում խուճապ, գաղթականութիւն, դասալքութիւն և յուզում երկրի մէջ: Միւս կողմից մահացու հարւած տրուում էր Անդրկովկասի միութեան. կովկասեան մահաճգնախններն ակնյայտի կերպով Թիւրքերի կողմն էին և համակրանքով էին նայում նրանց յաջողութիւններին և յառաջխաղացումին: Վրացիները դժկամակութեամբ էին ընդունում պատերազմը և պատերազմական գործադրութիւններէն մի շաբաթ յետոյ արդէն տենչում էին հաշտութեան: Հայերը մնացել էին մենակ՝ շրջապատուած թշնամիներով և յուսահատական ու անվիհեր կռիւ էին մղում Թիւրքերի դէմ:

Այսպիսի պայմաններում ուրիշ միջոց չէր մնում, բայց եթէ նորից սկսել հաշտութեան բանակցութիւններ՝ ճանաչելով Բրէստ-Լիտովսկի դաշնագրի պայմանները: Ի հարկէ, այդ պայմանները շատ էին ծանր և ըստ էութեան անընդունելի, մանաւանդ, Վրացիների և Հայերի համար: Բայց մի կողմից Թիւրքերը իրար յետեւից յաղթութիւններ էին տանում, խկ միւս կողմից ամենքն ունէին այն համոզումը, որ վերջնական խօսքը պիտի ասի այն խորհրդածողովը, որը պիտի դուժմարւի համաշխարհային պատերազմի հաշտութեան համար և որից կախուած են նաև Թիւրքիայի վերջ-

(\*) Այդ դէպքերի մանրամասնութեան ծանօթանալ ուզողներին կարող եմ յանձնարարել իմ « Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը » յօդուածաւորի VI եւ VII գլուխները « Հայրենիք » ամսագրի 1924 թ.ի համարներում:

նական սահմանները: Այս նկատուամբերով Անդրկովկասեան Սէյմը կազմեց հաշտութեան մի նոր պատուիրակութիւն և ուղարկեց, այս անգամ, Բաթում: Պատուիրակութեան նախագահն էր վրացի Ալ. Չխենկէլին, որ նախագահ էր և Տրապիզոնի պատուիրակութեան: Հայերի կողմից պատուիրակութեան կազմի մէջ մտնում էինք Յ. Քաջազնունին և ես: Մեր նպատակն էր Բրէստ-Լիտովսկի դաշնագիրն ընդունելով իբրև հիմք՝ կնքել նոր դաշնագիր:

Հէնց որ Բաթում հասանք, անմիջապէս մտանք յարաբերութեան մէջ Թիւրք պատուիրակութեան հետ, որի նախագահն էր Ծերակոյտի նախագահ և Արդարադատութեան նախկին նախարար Խալիլ բէյը և Անդրկովկասեան ճակատի հրամանատար Վէհիբ փաշան: Մայիսի 11-ին տեղի ունեցաւ առաջին պաշտօնական նիստը, ուր մեր պատուիրակութեան նախագահը յայտարարեց, որ Անդրկովկասը հանդիսանում է անկախ պետութիւն, ի վիճակի է ինքնաշօժար կերպով հաշտութիւն կնքելու և համաձայն է ընդունելու Բրէստ-Լիտովսկի դաշնագրի պայմանները: Խալիլ բէյը, ի պատասխան մեր յայտարարութեան, ասաց, որ Տրապիզոնի բանակցութիւններից ի վեր շատ բան է փոխւել, որ այժմ այլեւս կարելի չէ խօսել Բրէստ-Լիտովսկի դաշնագրի մասին և պէտք է ընդունել նոր պայմաններ: Այս խօսքերով նա յանձնեց մեր նախագահին հաշտութեան նոր պայմանները՝ ամփոփուած կնքուած պահարանի մէջ: Մենք գնացինք հիւրանոց և ծանօթացանք պայմաններին: Յիշում եմ շատ լաւ, թէ ինչպէս Քաջազնունին և ես նայելով պայմաններին կցւած քարտէսին՝ սարսափեցինք. — ո՛չ միայն Կարսը, այլ Ալեքսանդրապոլն ու Սուրմալուն էլ անցնում էին Թիւրքերին, մեզ մնում էր մի փոքրիկ կտոր հող՝ հարկւ 11,000 քառ. քիլոմետր: Մենք հաւաքեցինք ժողովի և որոշեցինք, որ այդ պայմանները անընդունելի են:

Պայմաններն ստանալու օրից — Մայիս 11-ից սկսած մինչև մեր վերադարձը Թիֆլիս Մայիսի 27-ին, անցաւ 16 օր: Ինչէր տեղի ունեցան այդ օրերի ընթացքում:

Այդ օրերին նախապատրաստուեց Կովկասի միութեան քայքայումը և երեք անջատ հանրապետութիւնների կազմութիւնը: Այդ 16 օրւայ ընթացքում պարզւեց ամենից առաջ, որ Վրացիները միաժամանակ գաղտնի բանակցութիւններ վարելով Գերմանացիների հետ Բաթումում՝ զօր. Ծօն-Լոսովի միջոցով և Բերլինում գերմ. կառավարութեան հետ՝ ապահովել էին իրենց համար Գերմանիայի հովանաւորութիւնը և Վրաստանի սահմանների անձեռնմխելիութիւնը Թիւրքական ներխուժման դէպքում: Միւս կողմից, աղբբէջանցիները պաշտօնական և անպաշտօն բանակցութիւններով հրաւիրում էին Թիւրքերին գալ և գրաւել Աղբբէջանը: Հայերը

Մնում էին բաւիս բուն նշանակութեամբ մենակ՝ երես-երեսի թիւրքերի հետ: Մայիս 15-ին գերման պատերազմութիւնը արդէն թիֆլիսումն էր և գերմանացի զինուորները պահում էին Վրաստանի սահմանները, իսկ Մայիսի 14-ին թիւրքերը, առանց նախազգուշացման, գրաւել էին Ալեքսանդրապոլը: Այսպիսի պայմանները Հայերին էլ թելուղում էին խնդրել Գերմանացիների պաշտպանութիւնը: Այդ քայլն և արաւ Հայոց Ազգ. Խորհուրդը, որի համար Համօ Օհանջանեանն ու Արշակ Զոհրաբեանը եկան Բաթում և ապա մեկնեցին Բէրլին:

Հայերի առանձնացումը չափազանց սուր կերպով զգացում էր Բաթումում: Անդրկովկասեան պատերազմութեան անգամ թաթարները — Գաջինսկի, Խան-Սոյսկի, Ուսուպբէզով—իրենց յաւակնաութիւնների մէջ այնքան հեռուներն էին գնում, որ նոն իսկ Երեւանը համարում էին ոչ-հայկական քաղաք և Հայաստանին մայրաքաղաք էին թողնում Էջմիածինը:

Այդ օրերին Բաթում եկաւ ծովային նախարար Ալեմալ փաշան: Մայիսի 22 ին նա տեսակցութիւն ունեցաւ Կովկասեան Պատերազմութեան հետ: Թաթարների հետ նա խօսեց շատ սրտազին կերպով, Վրացիների հետ՝ բաւական ջերմութեամբ. Հայերի հետ՝ շատ չոր ու պղպ: Մենք ժողովներ էինք ունենում համարեա ամէն օր, և հետզհետէ ստացւում էր ընդհանուր համոզում, որ Հայերը, Վրացիներն ու Ազրբէջանցիք կորցնում են ընդհանուր լեզու գտնելու հնարաւորութիւնը: Թաթարները պատրաստ էին անմիջապէս կնքել հաշտութեան դաշնագիր: Վրացիները փաստօրէն վերջ էին տւել պատերազմին: Պատերազում էին միայն Հայերը. Մայիսի 24-29-ի ընթացքին արեւնահեղ ձակատամարտներ էին տեղի ունենում Սարդարապատում և Ղարաքիլիսայում, որոնք ցոյց տւին հայ զինուորի ոյժն ու տոկունութիւնը:

Թիւրքերը՝ տեսնելով, որ Անդրկովկասեան Պատերազմութիւնը պա-ասախան չի տալիս, սկսեցին շտապեցնել: Մենք՝ հայ պատերազմներս, խնդրեցինք թիւրք պատերազմութիւնից, դոնէ Սուրմալուն և Ալեքսան-դրապոլն ու երկաթուղաղիծը թողնել Հայերին: Խալիլ բէյը, իր սանդուղ, հեռագրեց Պոլիս, բայց ստացաւ մերժողական պատասխան:

Մինչ Անդրկովկասեան Պատերազմութիւնը դանդաղում էր, Վրացիք փութով պատրաստուում էին ձեւակերպելու Անդրկովկասի բաժանումը, որ, կարծես, զգացւում էր օդի մէջ: Մայիսի 26-ին, Անդրկովկասեան Սէյմը յայտարարեց ինքն իրեն լուծած, Անդրկովկասեան Հանրապետութիւնը վերջացած. և նոյն Մայիսի 26-ին Վրաց Ազգ. Խորհուրդը յայտարարեց Վրաստանն անկախ հանրապետութիւն: Դրանից մի օր առաջ Բաթում էր

եկել Վրաց սօցիալ-դեմօկրատների պարագլուխ Ժօրղանիան և իմ հարցին թէ “Ազնուութիւն է նպաստել Կովկասի կազմալուծման, երբ Հայերը մենակ կուր են մղում ընդհանուր թշնամու դէմ,” պատասխանեց, թէ “Ազնու է այն, որ օգտակար է իմ ժողովրդին”:

Թիւրքերը տեսնելով, որ փաստօրէն այլևս գոյութիւն չունի այն պետութիւնը, որին նրանք ներկայացրել էին հաշտութեան պայմանները, այսինքն՝ Անդրկովկասեան Հանրապետութիւնը, Մայիսի 26-ի երեկոյեան, առտնձին-առտնձին վերջնագիր ներկայացրին Հայերին, Վրացիներին և Ազրբէջանցիներին: Պատասխանի համար ժամանակամիջոց էր տրուում մինչև Մայիսի 29 ի երեկոյեան ժամի 7:

Մայիսի 27-ին, վաղ առաւօտեան, մենք մեկնեցինք թիֆլիս. գերման զօրավար Ֆօն-Լոսովը, տաճիկների վրա ազդելու ապարդիւն փորձերից յետոյ, մեկնեց Բերլին: Մայիսի 27 ի երեկոյեան հասանք թիֆլիս և նոյն գիշերը Հայոց Ազգային Խորհրդին ներկայացրինք զեկուցում Բաթումի բանակցութիւնների մասին: Մեր տեսակէտը հետեւեալն էր. յայտարարել Հայաստանը անկախ և ընդունել թիւրքիայի պայմանները: Խորհուրդն իւրացրեց այս տեսակէտը և միւս օր, ժամ 12-ին, յայտարարեց Հայաստանի անկախութիւնը: Անմիջապէս ընտրեց մի նոր պատերազմու-թիւն—նախագահ՝ տողբիս գրողը և անդամներ՝ Յ Քաջազնունին ու Մ Պապաջանեանը: Միւս տրւեց լիազօրութիւն ստորագրելու հաշտութեան դաշնագիրը ըստ մեր հայեցողութեան:

Մայիսի 29-ին, առաւօտեան ժամի 6 ին, մենք մեկնեցինք Բաթում և տեղ հասանք նոյն օրը երեկոյեան ժամի 6 ին: Անմիջապէս գնացինք թիւրք պատերազմութեան նախագահի մօտ և յայտնեցինք, որ ընդունում ենք ներկայացուած պայմանները և պատրաստ ենք ստորագրելու դաշնա-գիրը: Մեր յայտարարութիւնն արինք վերջնագրի պայմանաժամը լրանալուց մէկ ժամ առաջ: Հաշտութեան դաշնագիրը ստորագրեց Յունիսի 4 ին, և մէկ ժամ առաջ: Հաշտութեան դաշնագիրն ստորա-յաջորդ օր մենք ուղեւորեցինք թիֆլիս: Նոյն օրը դաշնագիրն ստորա-գրեցին և Ազրբէջանի ու Հիւս. Կովկասի պատերազմութիւնները. Վրացիք ձգձգեցին մինչև վերջին կարիլուութիւն, յուսաով գերմանական օգնութեան վրա՝ չէին ստացում զիջումներ անել Բաթումի շրջանում, բայց թիւրքերը սպառնացին գրաւել թիֆլիսը, և նրանք տեղի տւին:

Ահա այն արտաքին պայմանները, որոնց մէջ ստորագրեց Բաթումի դաշնագիրը: Անտարակոյս, այդ դաշնագրով որոշուած սահմանները ձեռնաու չէին, բայց արդէն նոյն տարւայ Դեկտեմբերին, երբ թիւրքիան ստիպուած եղաւ պարպել Կովկասը, նրանք փոխուեցին: Երկու տարի յետոյ 1920 թ. Օգոստ. 10-ին, Սեււրի դաշնագիրը որոշեց Հայաստանի սահմանները 180

հազար քառ. քիլոմետր տարածութեամբ: Եւ չորս ամիս անցած, 1920 թ. Դեկտ. 2-ին, Ալեքսանդրապոլի դաշնագիրը Հայաստանին թողեց 29.000 քառ. քիլոմետր: Այս եկաւ Մօսկուայի բոլշեւիկ-թիւրքական դաշնագիրը, 1921 թ. Մարտ 16-ին, որ վաւերացեց Կարսում: Սակայն և այնպէս, առաջին ակտը, որ Հայաստանը մոցրեց միջազգային քաղաքական կեանքի ասպարէզ և դարձրեց միջազգային իրաւունքի անձ, մնում է Բաթումի դաշնագիրը: Արդ՝ թնչ է այդ դաշնագրի բողոքականութիւնը: Որո՞նք են նրա գլխաւոր կէտերը (\*):

Հիմնական դաշնագիրը իր մէջ պարունակում է 14 կէտ: Առաջին կէտը խօսում է Թիւրքիայի և Հայաստանի միջև հաստատելիք հաշտութեան ու բարեկամութեան մասին: 2-րդը որոշում է հուսաբական սահմանները Թիւրքիայի և Անդրկովկասեան հանրապետութիւնների միջև: 3-րդով խոստացում է Հայաստանին զինւորական օժանդակութիւն որևէ թշնամական ուժի յարձակման դէպքում: 4-րդը արգելում է զինւած խմբերի կազմակերպումը Հայաստանի հողի վրա: 5-րդը աղաչովում է իսլամ կրօնի ազատութիւնը Հայաստանում: 6-րդով կարգաւորում են հիւպատոսական յարաբերութիւնները և երկաթուղային հաղորդակցութեան վերականգնումը: 7-րդը սահմանում է փոխադարձ առանձնաշնորհումներ հաղորդակցութեան խնդրում: 8-րդը վերաբերում է փոստային յարաբերութիւններին: 9-րդով կարգաւորում են սահմանն անցնելու և սեփականութեան հարցերը: 10-րդը պարտաւորութիւն է դնում Հայերի վրա պարպել Բագուն: 11-րդը վերաբերում է Բրէստ-Լիտովսկի դաշնագրին, որը դառնում է պարտադիր դաշնադիր կողմերի համար այն չափով, որ չափով չի հակասում ներկայ դաշնագրին: 12-ով նախատեսւում է գրաււած հողերի պարպումը: Եւ 14-րդը որոշում է դաշնագրի վաւերացման ժամանակն ու տեղը — մի ամսւայ ընթացքում, Պոլսում:

Ահա Բաթումի դաշնագրի պայմանները: Ի հարկէ, մեզ համար ամենախրականը սահմանների հարցն էր — Հայաստանին թողնւում էր 11,000 քառ. քիլոմետր հող և 13 վերստ երկաթուղի: Հասկանալի է, որ այս կտոր հողի վրա ոչ միայն պետութիւն էր կարող զարգանալ, այլ և գաղթականներն էլ չէին տեղաւորի: Այդ հասկանում էին և Թիւրքերը, բայց նրանք արբեցած էին իրենց յաջողութիւններով:

Հիմնական դաշնագրին կցւած էր չորս յաւելւած: Առաջինով որոշ-

(\*) Տես « Le Transcaucasie et la République d'Arménie dans les faites diplomatiques du Traité de Brest-Litovsk au traité de Kars (1918-1921), par A. Poidebard, Paris.

ւում էին առւտրական յարաբերութիւնները Հայաստանի և Թիւրքիայի միջև. կողմերը փոխադարձաբար ստանում էին ամենից աւելի նպաստաւորեալի արտօնութիւններ: Երկուստեք տալահովում էր ազատ թրանզիտի իրաւունք: Երկրորդով կարգաւորւում էին սահմանային խնդիրները. սահմանի երկու կողմը 15 քիլոմետր տարածութեան վրա ապրող բնակիչներին համար չպիտի լինէր մաքսային դրութիւն. նրանք պիտի կարողանային ազատօրէն տեղափոխել ու վաճառել իրենց գոյքն ու անասունները: Երրորդով որոշւում էր իսլամ հոգեւորականների վիճակը Հայաստանում — հաւատի, դատաւանդութեան և եկեղեցական զույքերի կառավարութեան ազատութիւն: Որոշւում էին իսլամների քաղաքացիական իրաւունքները ամուսնութեան, թաղման, մկրիթների պահպանութեան սահմաններում, ինչպէս նաև դպրոցական և իսլամ համայնքի ներքին կեանքին վերաբերող մի շարք խնդիրներ: Ըստ երրորդ կէտի քրիստոնեայ և իսլամ հոգեւորականները պետութեան մէջ պէտք է նկատւէին իրաւահաւասար և պիտի վայելէին միատեսակ իրաւունքներ և առանձնաշնորհումներ: Այս երեք յաւելւածն էլ ստորագրւեցին միաժամանակ դաշնագրի հետ: Իսկ չորրորդը, որ վերաբերում էր գերիների փոխանակութեան և պատերազմի վերջաւորման հետ կապւած բոլոր խնդիրներին, ստորագրւած էր Անդրկովկասեան գոյքերի ընդհ. հրամանատար գոր. Օղէշէլիձէի և Թիւրք հրամանատար Վէհիբ փաշայի ու Խալիլ բէշի կողմից Մայիսի 15-ին:

Այժմ՝ երբ մարդ յետ է նայում այն բոլորի վրա, որ տեղի ունեցաւ ութ տարի առաջ 1918 թ. Յունիսի 4-ին, չի կարող չառել, որ 1918 թ. Մայիսի 28-ի և Յունիսի 4-ի ակտերով հիմք դրեց Հայաստանի Հանրապետութեան իրաւական գոյութեան: Ի հարկէ, այդ փաստը կարող էր լինել միայն իբրև հետեւանք բազմամեայ պայքարի, հաղաբար հերոսական գործերի և անհաշիւ զոհերի: Պատմական արդարութեան պահանջն էր, որ թափւած արիւնը ի գուր չկորչէ և հայ հայրենիքը դառնայ ազատ: Յետագայ բոլոր ակտերը եղան սոսկ նւիրագործումը այն դրութեան, որ հայ ժողովուրդը ստեղծել էր իր սեփական ուժով և Սարդարապատի ու Ղարաբաղի ճակատի հերոսական պայքարով ստիպել էր Թիւրքերին ընդունելու: Ընդհատ է, Բաթումի դաշնագիրը տալիս էր միայն 11,000 քառ. քիլոմետր հող, իսկ Սեփրինը՝ քսան անգամ աւելի, բայց այդ միայն քանակական նւաճում էր, սահմանների ընդարձակում — Հայաստանի պետութեան իրաւական գոյութեան սկիզբը դրեց Բաթումում: Հայաստանի իրական և իրաւական ճանաչումը պետութիւնների կողմից 1919-20 թւականներին եղան միայն հանդիսւոր նւիրագործումը այն փաստի, որ հայ ժողովուրդն էր նւաճել իրեն համար 1918-ին և միջազգային ղակոսով հաստատել Յունիսի

4-ին: Սրա մէջ է Բաթումի դաշնագրի պատմական արձեքը:

Արձանագրեմ նաև երկու փաստ, որ կապ ունին Բաթումի բա-  
նակցութիւնների հետ: Նախ՝ Սարդարապատի ու Ղարաքիլիսայի ճակա-  
տամարտներից յետոյ, Վէհիբ փաշան, յանուն Էնվէր փաշայի, առաջարկում  
էր մեզ կնքել Թիւրքիայի հետ զինուորական դաշինք և տալ 10,000 հաչ  
զինուոր դէպի Միջագետք արշաւելու համար: Մենք մերժեցինք՝ առար-  
կելով, որ հաչ ժողովուրդը չափադանց յոգնած է և ի վիճակի չէ նման  
ծրագիրներ իրագործելու: Թիւրքերը մնացին դժգոհ և զգալ էին տալիս  
մեզ, որ մենք հոգով մնացել ենք Դաշնակիցների հետ: Երկրորդ փաստն  
այն է, որ Գերմանացիք ակնյայտնի կերպով դէմ էին Թիւրքական  
ձգտումներին և ամէն կերպ հակառակում էին նրանց յառաջխաղացման  
դէպի Բագու և Հիւս. Կովկաս՝ մի կողմից կամենալով Թիւրքերին մղել  
դէպի հարաւ՝ Անգլիացիներին դէմ, միւս կողմից աշխատելով մնալ Բրեստ-  
Լիտովսկի դաշնագրի սահմաններում: Մենք այդ գիտէինք թէ Բաթումի  
գերման ներկայացուցիչ զօր. Ֆոն Լասովից և թէ մեր Բերլինի ներկա-  
յացուցիչներին:

Բաթումից մենք փորձեցինք յարաբերութեան մէջ մտնել և Բուզար-  
ների հետ, բայց անհնար եղաւ, որովհետև ամէն հաղորդակցութիւն  
կտրւած էր: Մենք բառիս բուն նշանակութեամբ կտրւած էինք ամբողջ  
աշխարհից և մնացել էինք մենակ Թիւրքերի հետ դէմ հանդիման:  
Ռուսաստանում այդ ժամանակ տեղի էին ունենում քաղաքացիական  
արիւնոտ կռիւներ: Պարսկաստանում իշխում էին Թիւրքերը: Իսկ  
Եւրոպայի հետ չկար ոչ մի կապ: Նման հանգամանքներում մեր հաշտու-  
թիւնը Թիւրքերի հետ միանգամայն ուղիղ և բանաւոր քայլ էր: Ամենքն  
զգում էին, որ այդ ժամանակաւոր համաձայնութիւն է, որ տեւական  
կը դառնար, եթէ Կենտրոնական Պետութիւնները գուրս գային յաղթա-  
կան հակառակ դէպքում, նա կը ջնջւէր, ամէն ինչ կ'անցնէր Դաշնա-  
կիցների հայեցողութեան: Պատահեց վերջինը:

Դաշինքը ստորագրելուց յետոյ, Յունիսի 6-ին, մենք հասանք Թիֆ-  
լիս և զեկուցում արինք Հայոց Ազգային Խորհրդին, որը մի քանի օր  
անցած կազմեց Հայաստանի անդրանիկ կառավարութիւնը: Քիչ յետոյ,  
մենք և մեր հարեւան հանրապետութիւնները հրաւէր ստացանք Գերմա-  
նիայից, Աւստրո-Հունգարիայից, Բոլղարիայից և Թիւրքիայից ներկայա-  
ցուցիչներ ուղարկել Պոլիս, ուր տեղի պիտի ունենար խորհրդածողով  
Բաթումի դաշնագրի բովանդակութիւնը վերաքննելու և նոր դաշնագիր  
ստորագրելու համար: Այդ բանում մենք տեսնում էինք Գերմանիայի  
ձեռքը, որ կամենում էր վերականգնել Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը:

Կազմեց մի նոր պատգամաւորութիւն՝ բաղկացած Ա. Ահարոնեանից,  
Մ. Պապաջանեանից և ինձանից: Յունիսի 15 ին մենք մեկնեցինք Պոլիս,  
ուր և մնացինք շուրջ 4 ամիս, բայց խորհրդածողովը տեղի չունեցաւ:  
1918-ի աշնանից սկսած պատերազմական բախտի անիւր դարձաւ Դաշ-  
նակիցների կողմը, և Գերմանիան իր զինակիցների հետ միասին կանչեց  
Փարիզ հաշտութեան խորհրդածողովի: Մեր պատմութեան մէջ սկսեց մի  
նոր գլուխ: Բաթումի դաշնագիրը այլևս բաժին էր դարձել պատմութեան:

Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.

### Ազատ Հայաստանը եւ Եւրոպան

(Մ Ա Յ Ի Ս 28-Ի Տ Օ Ն Ի Ա Ռ Թ Ի Ի)

Տանեհինգ դարէ ի վեր կը տօնենք Վարդանանց տօնը: Մեր նո-  
րագոյն պատմութեան մէջ շատ ունեցանք դրուագներ, որոնք իրենց  
վեհութեամբ կը գերազանցեն «Վարդանանց»ը: Ըմբոստներու խօլական  
թուիչքներ Վասպուրականի և Տարսուսի ձորերում, Զէյթունի ու Սասնոյ  
բարձունքներուն վրայ, որոնցմէ իւրաքանչիւրը արժանի է յաւէտ արձա-  
նագրուելու սերունդներու գիտակցութեան մէջ և մշտապէս խնկարկուելու  
ու երգուելու...


Ոչ մէկը, սակայն, այդ դրուագներէն կրնայ համեմատուիլ այն  
արիւնահեղ իրեցադնամարտին հետ, որ տեղի ունեցաւ 1918-ի Մայիսին  
Ղարաքիլիսայի ու Սարդարապատի հովիտներում և որ յանգեցաւ Մայիս  
28-ի պատմական, անմոռանալի անցքին...

Մասիսի ստորոտներուն ծագած՝ յոյսի զօրաւոր ձառադայթ մըն էր,  
որ կ'անցնէր կովկասեան լեռնաշղթայէն ու կերթար աւետելու համայն  
հաչ աշխարհին, որ նոր բան մը կատարուած է հայութեան կեանքին  
մէջ, խորհրդաւոր բեկում մը, մեր բազմադարեայ ու արտասուալից պատ-  
մութեան մէջ, բան մը, որուն ձրտեր են տասնեակ ու տասնեակ հաչ  
սերունդներ, յամառ, անդուլ մաքառումներով, օրհասական ճիգերով:


— Ազատ, ինքնիշխան Հայաստան:

Մայիս 28-ը այսուհետև խորհրդանշին է մեր հերոսական ժողովրդի  
այդ դարաւոր ճիգերու, խորհրդանշին այն վսեմ գաղափարներու, որոնց-  
մով կը շնչէին Հայոց աշխարհի անմահները՝ Դաւիթ Բէկէն մինչև  
Սերոբ ու Եփրեմ, Հայր Ալիշանէն մինչև Նալբանդեան ու Ռաֆֆի:





Մ. ՎԱՐԴԱՆԻԱՆ  
Հայաստանի Հոսովի ներկայացուցիչը



Կ. ՍՏԵՊԱՆԻԱՆ  
Հայաստանի առաջին Խորհրդարանի նախագահը

դուրս չհանէ Անդրկովկասէն, որպէս զի Հայաստանը չվտանգուի: Լյօջի Ջօրջ խոստացաւ, բայց քիչ յետոյ, այնուամենայնիւ, կաշղաղրեց յետ քաշել զօրքը՝ նախատեսելով, անշուշտ, ռուս-բուլղարիկեան յառաջխաղացումը դէպի Կովկաս:

Նոյն 1919-ին, Իտալիոյ ամբողջ ընկերվարական հաստուածը իր աջ ու ձախ թեւերով, միացաւ այն հոյակապ ու աննախընթաց ցոյցին, որ իտալական պարլամենտը սարքեց ի պատիւ անկախ Հայաստանի:

Չենք յիշատակեր բաղմաթիւ անհատ ընկերվարականներու (Ռընօտէլ, Մակտօնալտ, Ալբեր Թօմա, Վանդերվելդ և այլն) արտայայտութիւնները, պարլամենտի բեմէն՝ մամուլի ու հրատարակային ժողովներու մէջ ի նպաստ մեր երկրի անկախութեան:

1920-ին Իտալիոյ Ընկերվար. Կուսակցութեան պարլամենտական ֆրակցիան կը հրաւիրէր Հ. Հ. Հոովի դեսպանը բանախօսելու անկախ Հայաստանի մասին, որ այն ատենները ենթակայ էր սովետական յարձակումներուն:

1922 ին Համբուրգի Միջազգային Ընկերվար. Համագումարը հանդիսաւոր ու միահամուռ սրտչումով կը պահանջէր Սովետներէն ու անոնց դաշնակից Թիւրքիայէն, որ հայ ժողովրդին արուի ինքնորոշման իրաւունք: Նոյն պահանջը դրեր էին Համբուրգի համագումարին առջև Ուֆրայնացիք՝ խնդրելով, որ Ընկերվարական Ինտերնացիօնալը ինքնորոշումի սկզբունքն ընդունի նաև 40 միլիոննոց ուքրայնական ժողովրդին նկատմամբ և որ Հայաստանն ու Վրաստանը բացառութիւն մը չնկատուին: Համագումարը, սակայն, մերժեց այդ պահանջը՝ պատճառաբանելով, որ Հայաստանի պարագան տարբեր է, աւելի յստակ և սրոշ: Ազատ Հայաստանի պահանջը արդէն տեսակ մը աւանդութիւն է ընկերվարական աշխարհին մէջ:

\* \*

Անշուշտ, այս բոլոր սրտչումները կը մնան պլաստիկական. ընկերվարութիւնը այսօր չի կրնար փրկել Հայաստանն ու Վրաստանը թրքոսովետական ձանկերէ: Ոչ իսկ Մակդօնալդ, Անգլիոյ վարչապետ դաւնալով, բանակ զրկեց ռուսի և թիւրքի դէմ՝ իրագործելու համար Ինտերնացիօնալի որոշումը երկու վերոյիշեալ երկիրներու նկատմամբ:

Եւ այդ հանգամանքը չարախնդութեամբ վեր կը հանեն մեր հակառակորդները... «Տեսէք, թէ ինչպէս ապարդիւն են ձեր ճիգերը երեսուն տարիներէ ի վեր և թէ որքան անտարբեր ու ավիկար է ընկերվարական աշխարհը հայ դատին հանդէպ...»

Կը մտնան այդ մարդիկ ուժերու փոխ-յարաբերութիւնները արեւմտեան մարդկութեան մէջ, կը մտնան, որ ընկերվարական կուսակցութիւնները, որքան ալ ուժեղ ու ազդեցիկ, փոքրամասնութիւն են տակաւին իրենց պատկանեալ երկիրներուն մէջ և որ տիրական ազդեցութիւնը հոն, տարաբախտաբար, դեռ կը պատկանի դրամի արքաներուն, որոնք ստէպ կը զոհաբերեն իրենց ընչաքաղց ախորժակներուն ամենաարդար դատերը:

Աշխարհը, սակայն, կը յեղաշրջուի և դրամի գոռոզ դասակարգերու դէմ հետզհետէ, հզօր ու յարածուն, կը ծառանայ *դեմոկրատիան*, ընկերվար-ուսմկավարական հոսանքը, որ օր աւուր կը նուաճէ տիրական դիրքերը թէ առանձին երկիրներու և թէ Ազգերու Լիգային մէջ:

Միւս կողմէն, հայ դատի երկու մեծ թշնամիները կը գալարուին ներքին անդամանելի տագնապներու մէջ և վաղ թէ ուշ պիտի վառուին նոր հրդեհներով, որոնցմէ վերստին պիտի ծագի Հայոց ազատութեան արեւը...

Չողբանք, չվհատինք և վառ պահենք մեր հաւատը...

Մ. Վ. Ս. Ր. Ս. Գ. Ի. Ս. Ե.

## Հայաստանի Հանրապետութիւնը

Հայաստանի Հանրապետութիւնը ծնունդ առաւ 1918 թ. Մայիսի 28ին: Մի քանի օր յետոյ, Յունիսի 4-ին, Բաթումում ստորագրեց հայ-թրքական հաշտութեան դաշնագիրը, որով Թիւրքիան դարձաւ առաջին ճանաչողը անկախ Հայաստանի գոյութեան:

Ըստ Բաթումի դաշնագրի, Հայաստանի մէջ մտնում էին Երեւանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Դարալագեաղի, Դաղախի, Բորչալուի գաւառները որոշ մասերը և ամբողջ Նոր-Քաջաղէտի գաւառը—մօտաւորապէս 11,000 քառ. կիլոմէտր տարածութիւն:

Հայաստանի առաջին խորհրդարանն ու կառավարութիւնը նշանակեց Հայոց Ազգային Խորհրդից: Խորհրդարանը կազմեց կուսակցական ներկայացուցչութեան սկզբունքով և բաղկացած էր 18 դաշնակցականներից, 6 սօց.-յեղափոխականներից, 6 սօց.-դէմոկրատներից, որոնց թւում և մի բոլորէիկ, 6 ժողովրդականներից, 3 չէզոքից, 6 թուրքից, 1 եղիաից և 1 ռուսից: Անդրանիկ կառավարութեան նախագահն էր Յ. Քաջաղունին,

ներքին գործերի, հաղորդակցութեան, հանրային կրթութեան ու խնամատարութեան նախարար՝ Արամ Մանուկեան, Արտաքին գործոց՝ Ալ. Խատիսեան, Զինւորական՝ զօրավար Յ. Հախվերդեան (անկուս.), Ելեմտական՝ Խ. Կարճիկեան և Արդարութեան՝ Գ. Պետրոսեան (անկուս.):

Հայաստանի Խորհրդարանի հանդիսաւոր բացումը տեղի ունեցաւ Օգոստ. 1-ին Երեւանի քաղաքային ակումբի դահլիճում: Բացման նիստին ներկայ էին գերմանական, օսմանեան, աւստրիական, պարսկական և ուքրայնական ներկայացուցիչները: Նիստը բաց արաւ Հայոց Ազգային Խորհրդի փոխ-նախագահ Աւ. Սահակեանը, որը յոյս յայտնեց, որ երկրի սահմանները շուտով կընդարձակուին, և Հայաստանը հնարաւորութիւն կ'ստանայ սպրեւու խաղաղ և շինարար կեանքով:

Երբ Աւ. Սահակեանը արասանում էր բացման ճառը, խոնւած ժողովրդի խանդավառ ծափերի տակ, շէնքի վրա բարձրացրին հանրապետական կարմիր, կապուտ և նարնջագոյն դրօշը: Բացման ճառից յետոյ կազմեց Խորհրդարանի նախագահութիւնը — նախագահ՝ Աւ. Սահակեան (դաշն.), փոխ-նախագահներ՝ Դ. Զուբեան (սօց.-յեղ.) և Գ. Տէր-Խաչատրեան (ժող.), աւագ քարտուղար՝ Պ. Զաքարեան (անկուս.): Խորհրդարանի բացումից յետոյ կատարեց զօրահանդէս սպարապետ զօր. Նազարբէկեանի, Խորհրդարանի անդամների, կառավարական ու զիւանագիտական կազմի և հասարակութեան ներկայութեամբ:

Խորհրդարանի երկրորդ նիստում նախարարապետ Յ. Քաջաղունին, կարգաց կառավարական յայտադիրը:

Խորհրդարանի երրորդ և չորրորդ նիստերը նւիրեցին կառավարական յայտարարութեան քննութեանը և, ի վերջոյ, դաշնակցական ու ժողովրդական հատուածների միացեալ քւէարկութեամբ, ընդդէմ սօց.-դէմոկրատների ու սօց.-յեղափոխականների, հաւանութիւն տրեց գծւած քաղաքականութեան: Եւ այսպիսով Հայաստանի Հանրապետութիւնը անցաւ պետական կեանքի: Հայաստանը յայտարարեց ժողովրդապետական-դէմոկրատիկ հանրապետութիւն, մինչև սեփական օրէնքների հրատարակութիւնը ընդունեց Համառուսական Ժամանակաւոր Կառավարութեան և Անդրկովկասեան Սէյմի հրատարակած օրէնքները, ինչպէս նաև հին օրէնքների այն մասը, սրը վերացւած չէր յեղափոխական ժամանակի օրէնսդրութեամբ:

Հայաստանի առաջին կառավարութիւնը կազմւած էր դաշնակցականներից և անկուսակցականներից: Միւս կուսակցութիւնները անհաշտ պայքար էին մղում նրա դէմ: Դաշնակցութեան ջանքերը խառն կառավարութիւն կազմելու՝ յաջողութիւն չունեցան, և միայն երբ յայտնի դարձաւ,

որ Դաշնակիցները յաղթանակը մօտալուտ է, Հայ ժող. կուսակցութիւնը ցանկութիւն յայտնեց մտնել կառավարութեան մէջ: Հոկտեմբեր ամսին նախարարութիւնը վերակազմեց հետեւեալ ձևով. նախարարապետ՝ Յ. Քաջաղունի, Արտաքին գործոց նախարար՝ Սիր. Տիգրանեան, Ներքին գործոց՝ Արամ Մանուկեան, Զինուորական՝ զօր. Հախվէրդեան, Խնամատարութեան՝ Խ. Կարճիկեան, Արդարադատութեան՝ Սամ. Յարութիւնեան (ժող.), Ելևմտական՝ Հ. Էնֆիլաջեան (ժող.), Հանրային կրթութեան՝ Մ. Աթաբէգեան (ժող.), Պարենաւորման՝ Լ. Դուլեան (ժող.) և պետական վեբաճակիչ՝ Մինաս Բէրբէրեան (ժող.). Աթաբէգեանն ու Դուլեանը փաստօրէն երեւանում չմնացին ու շուտով հեռացան և առաջինին փոխարինեց Լ. Մելիք-Ղարաբէգեանը (ժող.), իսկ երկրորդին՝ Քր. Վէրմիշեանը (ժող.): Արամի և Կարճիկեանի մահից յետոյ առաջինի տեղը նշանակեց Ա. Խատիսեանը, իսկ երկրորդի՝ Սահ. Թորոսեանը:

Այս կօալիսիօն կառավարութիւնն էր, որ արտասահման ուղարկեց պատուիրակութիւն հաշտութեան Խորհրդաժողովի առջև Հայաստանը ներկայացնելու համար. Պատուիրակութեան նախագահ նշանակեց Ա. Ահարոնեանը և անդամ՝ Մ. Պապաշանեանը (ժող.), խորհրդական՝ զօրավար Կորկանեանը: Խորհրդարանը հրահանդէս պատուիրակութեան, սերտ համերաշխութեամբ Ազգ. Պատուիրակութեան հետ, պաշտպանել Հայաստանի անկախութիւնը և թրքահայ և ռուսահայ հողերի միացումը՝ ելքով դէպի Սև ծով:

Նոյն կօալիսիօն կառավարութեան օրով էր, որ, 1918 թւի վերջին, տեղի ունեցաւ հայ-վրացական պատերազմը Լօրու և Ախալքալաքի համար, ինչպէս նաև Վրացիների հակահայ քաղաքականութեան հետեւանքով: Պատերազմը վերջացաւ անդլիական միջամտութեամբ և ղեկավարներ ամսին երկու կողմերի համաձայնութեամբ Լօրու վիճելի շրջանը յայտարարեց չէզոք գօտի, իսկ Ախալքալաքը, նոյնպէս վիճելի, մնաց Վրաստանի փաստական տիրապետութեան տակ:

Տաճիկների հեռացումով Հայաստանի սահմանները սկսեցին հեռոցհեռ ընդարձակել: Առաջինը անցաւ Հայաստանի իշխանութեան ձեռքը Դարաքիլիսա-Ալիքսանդրապոլ-Ուլուխանլու երկաթուղին, որ ամբողջապէս թալանել էր տաճիկներից. հեռավոր, հեռախօս, կահուորութիւն, մեքենաներ, անդամ կայարանների դռներն ու պատուհանները ասկեարները տարին իրենց հետ: 1919 թ. ապրիլ 24 ին հայկական զօրքերը մտան Կարս և զբաւեցին մինչև Սարըղամիշ ու Մերդէնէկ: Մայիսի սկիզբին Հայաստանին միացեց և "Արաքսեան հանրապետութիւնը" — Շարուր-Նախիջևանի շրջանը: Նոյն ժամանակ Զանգեզուրն էլ փաստօրէն կազմում

էր Հայաստանի մասը: Այսպիսով 1919-ի առաջին կիսին, "կեանքի երկաթէ օրէնքները" ներդրածութեամբ, Սեւանայ լճի շուրջը կճկած Հայաստանը արդէն ընդարձակ երկիր էր՝ տարածւած Գորիսից մինչև Արդահան և Լալուարից մինչև Բարթողեան լեռնաշղթան:

Կօալիսիօն կառավարութեան օրով էր, 1919 թ. Մայիսի 28-ին, որ տեղի ունեցաւ Միացեալ Հայաստանի անկախութեան յայտարարութիւնը: Այդ ակտը հետեւանք էր ներքին լուրջ պահանջներին և թէ որքան կարեւոր էր, ցոյց է տալիս, թէկուզ, այն փաստը, որ նման քայլ արել էր և Ազգային Պատուիրակութիւնը Փարիզում: 1918 թ. նոյեմբերի 30-ին, ընդհանուր զինադադարից քիչ յետոյ, Պօղոս Նուպարը արել էր հետեւեալ յայտարարութիւնը.

« Հայկական Ազգային Պատերազմի ժամանակ, պատասխանելու համար հայ ազգին միակալ իդիսի, որուն մեկ մասը արդէն իսկ իբրև անկախ հանրապետութիւն կազմւած է, կը յայտարարեմ անբողոքական Հայաստանի անկախութիւնը, Կիլիկիայով միասին, Հարնաւայնական պետութիւններու և Միացեալ Նահանգներու հովանաւորութեան սակկալ Ազգերու Դաշնակցութեան, երբ ան կազմելի »:

Միացեալ Հայաստանի անկախութեան յայտարարութեան օրով էր կայացրել և Արևմտահայ երկրորդ համագումարը՝ գումարւած Երեւանում, 1919 թ. փետր. 6-13-ին: Իր քաղաքական բանաձեւում համագումարը « կը պարտադրէ ընտրւած Գործադիր Մարմին գործնական քայլեր առնել Արարատեան Հանրապետութեան նախարարութեան և խորհրդարանի հետ Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնն ունեցող պետական և օրէնսդրական մասնակցութիւնը բերելու գոյութիւնն ունեցող պետական և օրէնսդրական հաստատութիւններին մէջ, համադրային միութիւնը իրականացնելու համար »:

Ընդառաջ գնալով միահամուռ տրամադրութեան, Մայիսի 28-ին, կառավարութիւնը յայտարարեց հետեւեալ հրովարտակը.

« Հայաստանի անբողոքութիւնը վերականգնելու և ժողովրդի շահասար ազատութիւնն ու բարգաւաճումը ապահովելու համար, Հայաստանի կառավարութիւնը, հարնաւայն բովանդակ հայ ժողովրդի միասնաբուն կալիքի և ցանկութեան, յայտարարում է, որ այսօրուանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապէս միացած են իբրև անկախ պետական միութիւն »:

« Ուղիղ մի տարի առաջ ռուսահայերի հանագումարից ընտրւած Հայոց Ազգային Խորհուրդը յայտարարեց իրեն Անդրկովկասեան հայկական զաւառների բարձրագոյն իշխանութիւն: Ազգային Խորհուրդի կազմւած կառավարութիւնն այդ ֆաղափական ալիքի մասին պաշտօնա-

պես պետքեանց ներկայացուցիչներին յայտնելոց յետոյ՝ այս մի  
սարւայ մեջ յիստօրեկ հաստատել է իր իշխանութիւնն Անդրկովկասի  
հայկական զաւառներում:

« 1919 թ. փետրուար անսին երեւան քաղաքում կայացած Արեւ-  
մտահայ երկրորդ Համագումարը հանդիսաւոր կերպով յայտարարեց, որ  
նա Հայաստանը միացեալ եւ անկախ է նահանգում:

« Այժմ, Անդրկովկասում եւ օտանկեան կայսրութեան սահմաննե-  
րում գտնուած պապեկական հայկական երկրների միացեան եւ անկա-  
խութեան այդ ակտը կատարելով՝ Հայաստանի կառավարութիւնը յայտա-  
րարում է, որ միացեալ Հայաստանի պետական ձեռն է Ռաւիկափար  
Հանրապետութիւն եւ որ ինքը հանդիսանում է միացեալ Հայաստանի  
Հանրապետութեան կառավարութիւնը:

« Այդպիսով՝ ներկայումս Հայաստանի ժողովուրդն է իր անբող-  
ջացած հայրենիքի գերագոյն տեղն ու տեղերը, եւ Հայաստանի Պարչա-  
քանեան ու Կառավարութիւնը հանդիսանում են միացեալ Հայաստանի  
ագաս ժողովուրդը շողկապող բարձրագոյն օրենսդիր եւ գործադիր  
իշխանութիւնը:

« Հայաստանի կառավարութիւնը սոյն ակտը հրատարակում է 1919  
թ. ապրիլ 27-ի Պարչաքանի որոշմամբ Կառավարութեանը տրուած  
յաջող յիացօրութիւնների հիման վրա »:

Այս հրովարտակի յայտարարութեան առթիւ Երեւանում և գաւառ-  
ներում տեղի ունեցան մեծ հանդիսութիւններ, ժողովրդական թափօրներ  
ու զօրահանդէսներ:

Միացման ակտի յայտարարութիւնից յետոյ նշանակեցին նոր խոր-  
հրդարանական ընտրութիւններ ընդհանուր, գաղտնի և համեմատական  
սկզբունքով: Ընտրութիւնները տեղի ունեցան Յունիսի 21, 22 և 23 ին՝  
մասնակցութեամբ Դաշնակցութեան, Սօց.—յեղափոխականների, Գիւղացիա-  
կան Միութեան և Թաթարների: Ընտրեցին 80 պատգամաւորներ, որոնցից  
3 կին: Նորընտիր խորհրդարանը հանդիսաւոր կերպով բացեց Օգոստոսի  
1-ին և քանի որ նախարարապետ Քաջաղունին գտնուում էր արտասահ-  
մանում, ժողովրդականները դուրս էին եկել կօալիցիայից, ընդունեց հին  
կառավարութեան հրաժարականը, Օգոստոսի 7-ին նոր դահլիճի կազմու-  
թիւնը յանձնեց Ա. Խասիսեանին որը Օգոստ. 10 ին խորհրդարանին  
ներկայացրեց նախարարների հետեւեալ ցանկը. նախարարապետ և արտա-  
քին գործոց նախարար Ա. Խատիսեան, ներքին գործոց և արգարութեան՝  
Ա. Գիւլիսանդանեան, երևմտական և պարսեաւորման՝ Ս. Արարատեան,  
խնամատարութեան և աշխատանքի՝ Ա. Սահակեան, հանրային կրթութեան

և արւեստի՝ Ն. Աղբալեան, ղինւորական՝ զօր. Արարատեան: Նոյն նիս-  
տում կարգացեց կառավարական յայտագիրը:

1919 թ. ընթացքին Հայաստանի արտաքին քաղաքականութեան մէջ  
տեղի ունեցան մի քանի կարեւոր դէպքեր. Փետր. 12-ին Պօղոս Նուպարի  
և Ա. Ահարոնեանի ստորագրութեամբ Խաղաղութեան Վեհաժողովին ներ-  
կայացեցին հայկական պահանջները, որոնց մէջ Հայաստանի սահմանները  
ճշտուած էին հետեւեալ կերպով. Ա. — Վանի, Բաղէշի, Տիգրանակերտի,  
Սեբաստիոյ, Կարնոյ և Տրապիզոնի եօթը վիլայէթները՝ դուրս ձգելով  
Տիգրիսի հարաւակողմը և Օրտու—Սեբաստիա գծի արեւմուտքը գտնուող  
ըրջանները. Բ. — Կիլիկիոյ չորս սանջաքները, — Մարաշ, Գողան (Սիս),  
Ճէպէլ—Պէրէքէթ և Ատանա՝ Աղեքսանդրէտով. Գ. — Կովկասի Հայկական  
Հանրապետութեան ամբողջ երկրամասը — Երեւանի ամբողջ գաւառը,  
Թիֆլիսի նախկին գաւառի հարաւային մասը, Գանձակի գաւառի հարաւ-  
արեւմտեան մասը, Կարսի նահանգը՝ բացառութեամբ Արդահանից հիւսիս  
գտնուող ըրջանի: Այս հողերի համար պահանջուում էր անկախութիւն և  
այս ձեւով կազմուած պետութիւնը « դնել դաշնակից պետութիւնների և  
և Միացեալ Նահանգների կամ Ազգերի Լիգայի երաշխաւորութեան տակ »:  
Խնդրուում էր համաժողովից նշանակել, 20 տարւայ համար, մի հոգատար  
պետութիւն և սահմանել վստասեց հատուցում այն ամէն կարգի կորուստ-  
ների համար, որոնց ենթարկեց հայ ժողովուրդը ջարդերի, տարագրութեանց,  
յափշտակութեանց և աւերումների հետեւանքով: Այս պահանջները չէին  
բղիտում Հայաստանի Խորհրդարանի տւած հրահանգներից և մեծ մասով  
արդիւնք էին գաղութահայ անհող ու ցնորական տրամադրութիւնների: Այս  
ծրագիրը, արտասահմանում, դարձաւ յուզումնալից և ուժեղ պրօպագանդի  
նիւթ, ինչպէս նաև ղիւանագիտական լարուած աշխատանքի առարկայ:

Մի շարք բանակցութիւններից և խորհրդաժողովներից յետոյ, նոյեմ-  
բերի 3-ին, Հայաստանի և Վրաստանի միջև կնքեց երկու համաձայնա-  
գիր. առաջնով « զաշնադիր կողմերը պարտաւորուում են միմեանց միջև  
գոյութիւն ունեցող և ունենալիք բոլոր վէճերը լուծել համաձայնութեամբ,  
իսկ եթէ համաձայնութիւն չկայանայ, պարտադիր արբիտրաժի միջոցով »:  
Երկրորդ համաձայնագիրը հաստատում է երկու կողմերի համար ազատ  
թրանզիտ Հայաստանի և Վրաստանի երկաթուղիներով: Սահմանների հարցը  
երկար ու անպտուղ բանակցութիւններից յետոյ, թողնեց բաց:

Չինուած և անվէն անվերջ ընդհարումների նիւթ եղաւ Հայաստանի և  
Ազրբէջանի միջև Զանգեզուրի խնդիրը: Նոյեմբերի 23-ին երկու երկրների  
նախարարապետների միջև ստորագրեց մի համաձայնագիր, որով կողմերը  
պարտաւորուում էին վերջ տալ և նորից չըլիմել ղէնքի՝ լուծելու համար

վիճելի հարցերը, բանալ Զանգեզուրի ճանապարհները և դեկա. 4-ին Բագուում գումարել խորհրդածողով բոլոր վիճելի խնդիրները խաղաղ միջոցով լուծելու համար:

Ինչպես ներքին կեանքում, այնպես և արտաքին աշխարհում Հայաստանը հետզհետե զորացաւ և նրա միջազգային դիրքը ամրապնդւեց, և 1920 թ. յունւարի 19 ին Փրանսիան, Մեծ-Բրիտանիան և Իտալիան ճանաչեցին Հայաստանի պետութեան կառավարութիւնը, որպէս փաստական (de facto) կառավարութիւն: Եւ, իրօք, 1920 թ. առաջին կիսին Հայաստանն արդէն կազմակերպւած պետութիւն էր. կատարւած էր ահագին աշխատանք նրա բարգաւաճման համար: Հայաստանը ժողովրդավար հանրապետութիւն էր. ունէր ազատ ընտրութեամբ կազմւած խորհրդարան և պատասխանատու կառավարութիւն: Երկրում կար քաղաքական և կրօնական համոզումներ, խօսքի, մամուլի ու ժողովների կատարեալ ազատութիւն: Գործում էին հին կուսակցութիւնները և կազմւում էին նորերը: Բացի դաշնակցական մամուլից, հրատարակւում էին սօց.-յեղափոխական, ժողովրդական, ռամկավար թերթեր, որոնք անարդէլ քննադատում էին կառավարութիւնը:

Երկիրը բաժանւած էր 4 նահանգապետութեան: Քաղաքներում և գաւառներում հաստատւած էր ինքնավարութիւն, կազմակերպւած էր երկրի վարչութիւնն ու պահակազօրքը: Հիմնարկութիւններն ազգայնացւած էին: Հողերը, հանքերն ու անտառները պետականացւած: Ձեռնարկւած էր հողաբաժանման, և բոլոր աշխատաւորներին տրւում էր հող որոշւած քանակով: Սկսւած էին հողային, հանքային ու ջրային լայն հետազօտութիւններ: Խոշոր գումարներ յատկացւեցին այգիների, բամբակի, ծխախոտի և այլ արժեքաւոր բոյսերի մշակութեան: Գիւղացիութեան բաժանւեց առատ սերմացու, լծկան և կահաւորում:

Գործածութեան մէջ զրւած էր հայկական դրամ և հիմնւած պետական դրամատուն, գաւառական գանձարաններ ու վարկային կազմակերպութիւններ: Ընդունւած էր հարկերի յառաջտուական դրութիւնը: Կարգաւորւած էր մաքսային գործը: Ուժղին զարգացում էին ստացել կօսպերատիւնները, որոնց ոչ թ էր տալիս կառավարութիւնը:


Ընդունւած էր ընդհանուր, ձրի և պարտադիր կրթութեան սկզբունքը: Երկիրն արագօրէն ծածկւում էր դպրոցական ցանցով: Կազմակերպւած էր ուսումնական գործը: Հիմնւում էին միջնակարգ ու բարձրագոյն մասնագիտական դպրոցներ: Բացւած էր պետական համալսարանը: Որոշւած էր բանալ բարձրագոյն երաժշտանոց, պետական թատրոն: Հիմք էր դրւած պետական գրադարանի ու թանգարանի: Թիֆլիսից և արտասահմանից տեղափոխւում էին գրադարաններ, ինչպէս « Ազգագրական Ընկ. » թանգարանը և այլն:



Ա. ԷՆՑԻՍԻԱՆԻՆ  
Հայաստանի երկրորդ նախագահը



ԳՂՂԳՂԳՂԳՂԳՂ  
ԳՂՂԳՂԳՂԳՂԳՂ  
ԳՂՂԳՂԳՂԳՂԳՂ



Բարեկարգում էին հաղորդակցութեան միջոցները, փօտը, հեռագիրն ու հեռախօսը: Երկաթուղին վերանորոգւած էր և բանում էր կանոնաւոր: Մշակում էին նախագծեր նոր գծերի, նոր խճուղիների. անց էին կացում հեռագրական ու հեռախօսային նոր գծեր: Երեւանում հաստատուած էր ուժեղ ռադիօկայան և մի քանի փոքր կայաններ:

Վերակազմւած էր դատաստանական գործը: Մտցւած էր ժողովրդական ատենակալների (jury) դրութիւնը: Կազմակերպւած էր վճռաբեկ ատենաւր: Հիմնւած էին նահանգային դատարաններ և լաշնացում էր ժողովրդական դատարանների ցանցը: Մշակում էին հայերէն օրինագրքեր:

Խնամատարութեան և որբերի դաստիարակութեան գործը աստիճանաբար լաւանում էր. բացւում էին նորանոր որբանոց-գալորոցներ և արհեստանոցներ, որոնց լաշնօրէն օժանդակում էին ամերիկեան և անգլիական նպատամատուց ընկերութիւնները:

Բանակը վերակազմւած էր. մտցւած էր պարտազիր զինւորագրութիւն: Հիմնւած էին ստրաշական դասընթացքներ և ծրագրւում էր բանալ զինւորական վարժարան: Հիմնւած էին ռազմա-արհեստանոց, փամփուշտի գործարան և հագաստի, կօշիկի և այլ իրերի արհեստանոցներ. Ձանք էր թափւում բանակի ազգայնացման և մարտունակութեան բարձրացման համար:

Երկիրը օր օրի վրա կարգաւորւում, վերաշինւում և յառաջադիմում էր: Բարձրանում էր ժողովրդի ինքնազարգացումը: Հիմնւում էին արդիւնաբերական և առւարական հիմնարկութիւններ — գործարաններ, արհեստանոցներ, հողագործական ձեռնարկներ: Սկսում էր գալ արտաքին՝ հայ և օտար նախաձեռնութիւնն ու դրամադրութիւնը: Մայր էր տւած ընդհանուր հետաքրքրութիւն և, բանաստեղծի ասածին պէս, ամէն կողմից հայ զանգւածները սկսել էին զիմել իրենց հայրենիք:

Արտաքին աշխատում Հայաստանն արդէն ճանչցւած պետութիւն էր. նա ունէր դեսպաններ կամ դիւանագիտական ներկայացուցիչներ Թիֆլիսում, Բագում, Թէհրանում, Վաշինկթօնում, Լօնդօնում, Փարիզում, Հռոմում, Աթէնքում, Պոլսում, Ռուսաստանում և ուրիշ տեղեր: Հայկական պետութիւնը արագ և հաստատուն քայլերով զիմում էր դէպի հաշտութեան դաշնագրի ստորագրութիւնն ու Ազգերի Լիգայի անդամակցութիւնը, երբ...

1920 թ. ապրիլ 28-ին Ազրբէջանը դարձաւ խորհրդային, և մայիսի սկզբին հայ բոլշեւիկները Հայաստանի զանազան մասերում բարձրացրին ապստամբութեան դրօշը: Ալեքսանդրապօլ, Կարս, Դիլիջան, Նոր-Բայազէտ դարձան քաղաքացիական կռիւների թատերաբեմ: Մայիսի 5-ին հրաժարեց Ա. Խատիսեանի նախարարութիւնը և երկրի իշխանութիւնը յանձնեց Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրօին: Կազմեց Հ. Օհանջանեանի դահլիճը հետեւեալ ձեւով. նախարարապետ և արտաքին գործոց նախարար՝ Հ. Օհանջանեան, ներքին գործոց և զինւորական նախարար՝ Ռ. Տէր-Մինասեան, հաղորդակցութեան Ա. Ջամուկեան, երկրադործութեան և աշխատանքի՝ Ս.

Վրացեան, երևնտական և արդարադատութեան՝ Ա. Գիւլխանդանեան, խնամատարութեան՝ Ս. Արարատեան և հանրային կրթութեան՝ Գ. Ղազարեան: Բիւրօ-կառավարութիւնը կարճ ժամանակում ձեռք բերեց բոլորեկեան խռովութիւնները և ձեռնարկեց ապստամբ մահմեդական շրջանների — Զանգիբասարի, Բէօլիւք-Վէրիի, Շարուր-Նախիջևանի, Ղարադոշուրու ձորի, Օլթիի շրջանի գրաւման ու խաղաղացման: Այս դործողութիւնները զարգանում էին շատ յաջող, երբ տաճիկների, ազրբէջանցիների և հայ բոլորեկեանների պահանջով կարմիր բանակը յարձակեց Հայաստանի վրա, գրաւեց Ղարաբաղն ու Զանգեզուրը և հասաւ Նախիջևան, կանխելու համար նրա գրաւումը հայերից: Հայաստանի կառավարութիւնը, ռուսական մեծ ոյժի ճնշման տակ, տեղի տւեց և օգոստոսի 10-ին Թիֆլիսում ստորագրեց համաձայնութիւն, որով հաստատուեալ էր ժամանակաւոր սահման Հայաստանի և բոլորեկեանների միջև:

Դեռ մայիսեան ապստամբութիւնից առաջ Հայաստանի կառավարութիւնը Մօսկա էր ուղարկել առանձին պատուիրակութիւն Լ. Շանթի գլխավորութեամբ երկու երկրների միջև հաշտութեան ու բարեկամութեան դաշնագիր կնքելու նպատակով: Շանթի և Չիչերինի բանակցութիւնները կարճ ժամանակում վերջացել էին յաջողութեամբ և դաշնագիրը պատրաստ էր ստորագրութեան, երբ հայ և ազրբէջանցի բոլորեկեանները պահանջում են ոչ մի դէպքում դաշնագիր չկնքել « Դաշնակների » հետ: Չիչերինը ստիպուած է լինում ուղարկել իր ներկայացուցիչ Լէգրանին Բագու, որպէսզի նա այնտեղի բոլորեկեաններին համոզելուց յետոյ անցնի Երեւան և դաշնագիր ստորագրէ Հայաստանի կառավարութեան հետ:

Մինչ տեղի էին ունենում այս դէպքերն ու բանակցութիւնները, Եւրոպայում պատրաստուեալ էր հաշտութեան խորհրդաժողովը թիւրքերի հետ: 1920 թ. օգոստ. 10-ին ստորագրեց Սեւրի դաշնագիրը, որի 88-րդ յօդուածով « Թիւրքիան յայտարարում է, որ ինքը նախապէս է, ինչպէս առդէս են անկախ պետութիւններ, Հայաստանը որպէս ազգայն էր անկախ պետութիւն »: 89-րդ յօդուածով Հայաստանի սահմանների որոշման պարտաւորութիւնը յանձնեց նախագահ Վիլսոնի իրաւաբարութեան: Նոյն տարւայ նոյ. 22 ին Վիլսոնը գծեց Հայաստանի սահմանները, որով թրքահայ հողերից Հայաստանին պիտի անցնէր 87,000 քառ. քիլոմէտր երկրումի, Վանի, Բիթլիսի և Տրապիզոնի նահանգներում:

Սեւրի դաշնագիրը, ինչպէս նաև Հայաստանում ըմբոստ մահմեդական շրջանների վերաբերմամբ գործադրուած զսպողական միջոցները, առիթ ծառայեցին թիւրքերի ձեռքին յարձակելու Հայաստանի վրա: Ապահովուած բոլորեկեանների նիւթական ու բարոյական աջակցութեամբ, սեպտ. 23-ին, Բեադլիմ Կարաբէքիր փաշան իր զօրազիններն շարժեց դէպի Հայաստան: Պատերազմը ունեցաւ ճակատագրական հետեւանքներ յողմած և ուժասպառ Հայաստանի համար: Հոկտ. 30-ին ընկաւ Կարսը և պարզ դարձաւ, որ

պարտութիւնը անխուսափելի է: Հայաստանի ճիչերը և օգնութեան աղաղակները ոչ մի տեղից ոչ « մարդասէր » Եւրոպայից և ոչ « յեղափոխական » Մօսկայից արձագանք չգտան: Հայաստանը քսուեց դառնութեան բաժակը մինչև վերջին մրուրը:

Նոյեմբերի սկզբին հրաժարեց Հ. Օհանջանեանի կառավարութիւնը և Խորհրդարանը յանձնարարեց Ս. Վրացեանին կազմել նոր դահլիճ: Նոյ. 24-ին Ս. Վրացեան ներկայացրեց Խորհրդարանին դաշնակց. — սօց. — յեղափոխական նախարարութեան հետեւեալ ցուցակը. նախարարապետ, արտաքին և ժամանակաւորապէս ներքին գործերի նախարար՝ Ս. Վրացեան, զինւորական՝ Դրօ, օգնական՝ Հախվերդեան, երևնտական՝ Հ. Տէրտէրեան, օգնական՝ Դր. Զաղէթեան, արդարադատութեան՝ Ա. Խոնդկարեան, երկրագործութեան և աշխատանքի՝ Ա. Յովհաննիսեան, Հանրային կրթութեան և արւեստի՝ Վ. Միխայրեան: Միւս տեղերը մնում էին բաց:

Նոր կառավարութեան գլխավոր նպատակն էր կնքել հաշտութիւն թիւրքերի հետ, որոնց հետ բանակցութիւններն արդէն սկսած էին Ալեքսանդրապոլում, և համաձայնութեան լեզու գտնել Խորհրդ. Ռուսաստանի հետ: Այս վերջինը, սակայն, ուժն ու բռնութիւնը գերազատեց և իր ներկայացուցիչ Լէգրանի միջոցով վերջնագիր ներկայացրեց Հայաստանը խորհրդայնացնելու համար: Դեկտ. 2-ին, Հայաստանի կառավարութեան և Լէգրանի միջև ստորագրեց հետեւեալ պայմանագիրը.

- « 2 Դեկտ. 1920 թ., մի կողմից Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. լիազօր ներկայացուցիչ ընկ. Լէգրանը, Ռ. Կ. Կ. Կ. — ի լիազօրութեամբ, ի դիմաց Ռուսաստանի խորհրդային կառավարութեան, եւ միւս կողմից ընկերներ Գրօն եւ Տէրտէրեան ի դիմաց Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան՝ կնքեցին համաձայնութիւն հետեւեալի մասին.
- « 1. Հայաստանը յայտարարում է Անկախ Սօցիալիստական խորհրդային Հանրապետութիւն:
- « 2. Մինչև Հայաստանի խորհրդային համագումարի հրաւիրումը կազմուել է ժամանակաւոր Ռազմա-յեղափոխական կոմիտէ, որին կանցնի բովանդակ իշխանութիւնը Հայաստանում:
- « 3. Ռուսաստանի խորհրդային կառավարութիւնը ընդունում է, որ Հայաստանի Սօցիալիստական խորհրդային Հանրապետութեան հողերի մէջ անվիճելի կերպով մտնում են. Երեւանի նահանգը իր բոլոր գաւառներով, Կարսի նահանգի մի մասը, որը զինուորական տեսակէտից կապահովէ երկարուղու սիրապետութիւնը՝ Չուլժա կայանից Արաքս-կայանան՝ Գանձակի նահանգի Զանգեզուրի գաւառը եւ Ղազախի գաւառի մի մասը օգոստ. 10-ի համաձայնութեան սահմաններում, եւ Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի սիրապետութեան տակ էին գտնուում մինչև 1920 թ. սեպտ. 28:
- « 4. Հայկական բանակի հրամանատարական կազմը չի ենթարկուել պատասխանատւութեան այն գործերի համար, որ կատարել է բանակի շարքում մինչև Հայաստանում խորհրդային իշխանութեան յայտարարումը:
- « 5. Գաւառացիներն եւ ուրիշ սօցիալիստական կուսակցութիւնների Ս.-Յ., Ս.-Դ., անդամները ոչ մի հալածանքի չպիտի ենթարկուեն կուսակցութեանը պատկա-

նելու եւ կօմունիսական կուսակցութեան դէմ մղած կռիւն մասնակցելու եւ Հայասանը խորհրդային յայտարարելուց առաջ կասարած գործերի համար

« 6. Ռազմա-յեղափոխական կօմիտէի մէջ մեզու եւ հինգ անդամներ կօմունիսական կուսակցութեան կողմից նշանակւած եւ երկու անգամ ձախ-դաւանակցականների խմբակից՝ համաձայնելով կօմունիսական կուսակցութեան հետ:

« 7. Ռուսասանի խորհր. կառավարութիւնը միջոցներ է ձեռք առնում անմիջապէս կենտրոնացնելու Հայասանի Սօցիալիսական Խորհրդային Հանրապետութեան անկախութեան պաշտպանութեանը համար անհրաժեշտ զինուորական ուժեր:

« 8. Սոյն համաձայնագիրը ստորագրելուց յետոյ՝ Հայասանի հանրապետական կառավարութիւնը բաւում է իշխանութիւնից: Իշխանութիւնը ժամանակաւոր կերպով մինչեւ Յեղափոխական կօմիտէի գալը, անցնում է զօրանումանասարութեան, որի գլուխն է կանգնում ընկ. Գրօն: Ռ. Ս. Ֆ. Ս. Հ.-ի կողմից Հայասանի զօրանումանասարութեան կից կօմիտար է նշանակւում ընկ. Սըրբիներ:

« Պատասխան է երկու օրինակ:

« Ռ. Ս. Ֆ. Ս. Հ.-ի լիազօր ներկայացուցիչ՝ **Լ. Է. Գրան.**

« Հայասանի Հանրապետութեան կառավարութեան լիազօրներ՝


**Գրօ, Տէրտէրեան ».**

Նոյն դեկտ. 2.-ի գիշերը, «Բեադիմ» Կարաբէքիւրի վերջնազրի վրա, Ալեքսանդրապօլում, ստորագրուեց հաշտութեան դաշնագիրը Հայերի և Թիւրքերի միջև: Ձիշերինի ներկայացուցիչ Միլիանին, որ Ալեքսանդրապօլ էր եկել միջնորդելու համար հայերի և Թիւրքերի միջև, ո՛չ միայն չօգնեց հայ պատգամաւորութեան, այլ և թշնամական ցոյցեր ու միտինգներ կազմակերպեց Հայաստանի հանրապետութեան դէմ:

Այսպիսով, տաճիկները և բօլշեւիկները գործակցութեամբ, խորտակուեց Հայաստանի անկախութիւնը: Լեզրանի ստորագրած դաշնագիրը յաջորդօրն իսկ պատուեց և յայտարարեց չեղեալ. բօլշեւիկները դրժեցին իրենց խօսքն ու ստորագրութիւնը: Բայց դրա փոխրանէն հարազատօրէն պահեցին Ալեքսանդրապօլի դաշնագիրը և, մի տարի յետոյ, Կարսում, առանց մի նշանակեց փոխելու, վերածեցին նոր դաշնագրի՝ այս անգամ ներսօգործւած և Մօսկւայի ստորագրութեամբ ու կնքով: Նոյն բօլշեւիկները օգնութեամբ Թիւրքերին էլ ջնջեցին Սեւրի դաշնագիրը և տեղը դրին Լօզանը: Լօզան ու Կարս — երկու ծանր տապանաքարեր, որ Թիւրք-բօլշեւիկեան եղբայրութիւնը դրել է հայ ժողովրդի կենդանի մարմնի վրա...

Սակայն, մենք գիտենք. ժամանակը, որ գահեր է խորտակում և թագակիր աւագաններ դահալիժում անդունդները, վաղ թէ ուշ, պիտի տապալէ և բօլշեւիկ-քեմալական բռնակալութիւնը և նրանց աւերակների տակից դարձեալ իր բովանդակ հասակով ոտքի կը կանգնէ Հայաստանը և զւարթ ու համարձակ՝ կը նայէ աշխարհի աչքին: Մենք գիտենք. այժմ որ կը գայ:

**Ս. ԱՐԱՏՅԱՆ**



4

« Ազգային գրադարան



NL0410057

12-090